Ազգ
Azg
8 ՄԱՐՏ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 43(4895)
ISSN: 1829-1651


# «Նրանք, ովքեր պատերազմ են «խաղում», պետք է արդեն վաղուց սովորած լինեին պատմության դասերը»

Հայկական կողմը հարցի լուծումը տեսնում է միայն խաղաղ ճանապարհով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցային գործընթացի շրջանակներում: «Եվ բանակցությունների այլընտրանքային ֆորմատներ ստեղծելու ոմանց փորձերը, ինչպես նաեւ ոչ հավասարակշռված ձեւակերպումներ պարունակող բանաձեւեր ընդունելու փորձերը միայն վնասում են բանակցային գործընթացը», մարտի 6-7-ի բրյուսելյան հանդիպումներում հայտարարել է Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը**:

Ըստ պաշտոնական հաղորդագրության, նախագահը Բրյուսելում հանդիպումներ է ունեցել Եվրոպական խորհրդարանի նախագահ Մարտին Շուլցի, Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահ Վիլֆրիդ Մարտենսի, ԵՄ ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի, Եվրոպական խորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպոյի, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բառոզուի հետ:

«Անկախ Հայաստանում եւ ԼՂ խնդրի կարգավորման գործընթացում ներգրավված երկրներում ընթացող ընտրական գործընթացներից, հայկական կողմը հավատարիմ է մնում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում կարգավորման գործընթացի շարունակմանը եւ Հիմնարար սկզբունքների աշխատանքները ավարտելուն, դրանից հետո նոր միայն խոսք կարող է գնալ «մեծ շրջանակային համաձայնագրի» շուրջը բանակցությունները սկսելու մասին», ԵՄ շրջանակներում հանդիպումներում հավաստիացրել է Սարգսյանը:

Նրա խոսքերով, բանակցությունները անհամատեղելի են պատերազմի քարոզչության, ազգատյացության եւ աննախադեպ չափերի սպառազինությունների ձեռքբերման հետ: «Նրանք, ովքեր պատերազմ են «խաղում», պետք է արդեն վաղուց սովորած լինեին պատմության դասերը», ակնհայտ հասցեատիրոջը հիշեցրել է Հայաստանի նախագահը:

Նախագահն անդրադարձել է նաեւ փետրվարի 27-ին ԵՄ խորհրդում ընդունված Հարավային Կովկասին, նաեւ ԼՂՀ հարցին վերաբերող փաստաթղթին, շեշտելով. «Հայաստանը բազմիցս նշել է, որ Լեռնային Ղարաբաղը Եվրոպայի մաս է, կրողն է այն արժեքների, որոնք կրում է Եվրոպան, եւ վաղուց հասունացել է անմիջական շփումների պահը»: Հայաստանը մեծապես կարեւորել է նաեւ ԵՄ ներկայացուցիչների Ղարաբաղ պարբերական այցելությունների անհրաժեշտությունը:

Բրյուսելում անդրադարձել են նաեւ Հայաստանի առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Նախագահ Սարգսյանը ուրախություն է հայտնել, որ ի թիվս այլ միջազգային դիտորդների, հայաստանյան ընտրությունները կդիտարկի նաեւ Եվրոպական խորհրդարանի դիտորդական առաքելությունը: «Հայաստանի իշխանությունները հույժ վճռական են 2012թ. մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրությունները կազմակերպելու եւ անցկացնելու միջազգային չափանիշներին համապատասխան»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Նա կին է, մայր, զինվոր, հայրենիքի պաշտպան...

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ռուզաննա Թովմասյանը** զենքը վերցրեց 1992-ին: Պահը օրհասական էր, պետությունը նաեւ իր կարիքն էր զգում: 1991-ին Քարինտակ գյուղում տեղի ունեցած մարտերի ժամանակ եղբայրը պատանդ ընկավ: «Հանուն եղբորս կամավոր մեկնեցի ռազմի դաշտ, պետք է գնայի պաշտպանելու մեր հայրենիքը»: 20 տարվա հեռավորությունից այժմ Ռուզաննան իրերին այլ կերպ է նայում: Խոստովանում է, որ կնոջ համար ռազմի դաշտը դժվար փորձություն էր, բայց այն ժամանակ խոսում էր ոչ թե միտքը, այլ՝ սիրտը: «Այսօր էլ պատրաստ եմ կանգնել տղամարդկանց կողքին, նրանց հետ կիսել նույն դժվարությունները, ահն ու սարսափը: Եթե ընտրելու հնարավորություն տրվեր՝ կընտրեի նույն ճանապարհը: Վայրկյան անգամ չեմ զղջացել, որ մեկնել եմ ռազմի դաշտ», ասում է տիկին Ռուզաննան:



Պատերազմից հետո Ռուզաննան վերադարձավ բնականոն կյանքի, աշխատանքին, սակայն պատերազմն իր հետքը թողել էր: «Ռազմի դաշտում շատ ընկերներ եմ կորցրել, նրանցից յուրաքանչյուրի կորուստն ինձ համար սարսափելի էր, մինչ այդ ես մահ չէի տեսել: Մարդիկ հենց ռազմի դաշտում են գնահատում կյանքը: Իմ ընկերները հեռանում էին, իսկ ես դեռ ողջ էի, պայքարում էի թշնամու դեմ: Դա մի զգացում է, որ դժվար է բացատրել, դու ուրախ ես, որ դեռ ողջ ես, բայց խելագարվում ես ընկերոջ կորստի ցավից: Պատերազմն ինձ փոխեց: Ես այսօր էլ զինվոր եմ», ասում է նա: Այսօր արդեն նրա գործը շարունակում է որդին՝ 10-ամյա Հարությունը: Նրա ապագան արդեն գծագրված է: «Փոքր Մհեր» կրթահամալիրում սովորելուց հետո կմեկնի ազգային բանակ՝ պաշտպանելու հայրենիքի սահմանները, սահմանն, որ տարիներ առաջ պաշտպանում էր մայրը:

Տես էջ 2

# «Եվրոտեսիլին» Հայաստանը չի մասնակցի

**Մարտի 7-ին Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունը պաշտոնապես տեղեկացրել է Եվրոպական հեռարձակողների միությանը, որ հրաժարվում է մասնակցել 2012 թվականի «Եվրոտեսիլ» երգի մրցույթին:**

**Այս տարվա «Եվրոտեսիլ» երգի մրցույթի համակարգող Յոն Ուլա Սանդը «Եվրոտեսիլի» պաշտոնական կայքում նշել է, որ հիասթափված է հայկական կողմի որոշումից: «Չնայած Եվրոպական հեռարձակողների միության եւ մրցույթն ընդունող հեռուստաընկերության ջանքերին՝ ապահովել հայկական պատվիրակության սահուն մասնակցությունը, եղան հանգամանքներ, որոնք մեր հսկողությունից դուրս էին, ինչն էլ բերեց այդ որոշման կայացմանը», ասել է նա:**

**Բաքվում կայանալիք երգի մրցույթին կմասնակցեն 42 երկրներ:**

**«Ազգը» մի քանի հրապարակումներով անդրադարձել էր այդ մրցույթին գնալ-չգնալու տարակարծություններին, որոնք հնչեցրել էին և՛ պաշտոնատար անձինք, և՛ երգիչներ ու կոմպոզիտորներ, և՛, իհարկե, թերթի աշխատակիցները: Ի վերջո, հարցը այսպես լուծվեց:**

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

# Կանայք՝ մեր կյանքում, երբեմն սիրված, երբեմն խոցելի, հաճախ անտեսված...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ամեն տարի զարմանում, բայց նույնը կրկնում ենք: Շատերը գտնում են, որ այս օրը կանանց՝ միմյանց նվերներ փոխանակելը ճիշտ չէ, որ դա տղամարդկանց մենաշնորհը պիտի լինի: Նվերը՝ նվեր, վատ չէ: Իրականում, սակայն, կանանց շնորհավորանքները միմյանց շատ տեղին են: Ի վերջո, կանանց միությունն է այդ օրը որպես տոն հռչակել եւ դա փաստորեն կանանց իրավունքների, կյանքի տարբեր՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, կրթական, մշակութային եւ այլ ոլորտներում իրավահավասարության համար եւ սեռային խտրականության դեմ կանանց տեւական պայքարի արդյունքն է: (Տղամարդիկ ինչո՞ւ պիտի ուրախ լինեն որ):



Իրականում սա մարդկության կարեւոր ձեռքբերումներից է՝ քաղաքակրթական առաջընթացի, հասարակության հումանիզացման եւ առհասարակ ազատագրման: Որովհետեւ ասենք ինչի է նման մի հասարակություն, որտեղ կնոջ կարգավիճակը սահմանափակվում էր միայն երեխա ունենալու, մեծացնելու, տնային կենցաղի սահմաններում: Կամ այն հեռավոր ժամանակաշրջանը միջնադարի, երբ կանայք ինկվիզիցիայի էին ենթարկվում, ողջ-ողջ այրվում խարույկի վրա, մի հասարակ բանի համար՝ մտային ունակություններ դրսեւորող կանայք համարվում էին դիվային ուժերի ենթակա, կամ զուտ բուժելու նպատակով խոտաբույսեր հավաքող կանանց կապում էին չար ուժերի, դիվային ոգու հետ եւ սոսկալի կտտանքների ենթարկում, բռնադատվում էր նրանց կամքը, կանայք զուրկ էին կրթության իրավունքից, կրոնա-եկեղեցական կյանքից առհասարակ վտարված ու մերժված էին (ի սկզբանե էր, Աստվածաշունչ մատյանում է ասված: Ի տարբերություն նախորդող շրջանի, երբ կին-էությունը աստվածացված էր գերագույն աստիճանի, ընդհուպ ռազմի եւ իմաստության):

Տես էջ 4

# Իրանը կողմ է խաղաղ կարգավորմանը, Թուրքիան կողմ է Ադրբեջանին

Թուրքիայի, Ադրբեջանի եւ Իրանի արտգործնախարարների երկրորդ հանդիպումը մի քանի հետաձգումներից հետո երեկ վերջապես տեղի ունեցավ Նախիջեւանում՝ հաջորդն էլ այս տարվա սեպտեմբերին Վանում անցկացնելու պայմանավորվածությամբ: Ադրբեջանական գործակալությունները տեղեկացնում են, թե Ահմեդ Դավութօղլուն, Էլմար Մամեդյարովն ու Ալի Աքպեր Սալեհին հավաքվել էին քննարկելու էներգետիկային ու առեւտրին, ինչպես նաեւ թմրանյութերի ապօրինի շրջանառության ու ահաբեկչության դեմ պայքարին վերաբերող հարցեր:

Սակայն հանդիպումից հետո ասուլիսում ու հայտարարությամբ առավելապես անդրադարձել են հարավկովկասյան խնդիրներին, հատկապես ղարաբաղյան հարցին:

Այս ձեւաչափով եռակողմ, ինչպես նաեւ երկկողմ հանդիպումներից առաջինը 2011-ի ապրիլին էր Ուրմիայում, որտեղ պայմանավորվածություն էր ձեռք բերվել հաջորդ անգամ հանդիպել նույն տարվա հոկտեմբերին: Սակայն ոչ միայն 2011-ի հոկտեմբերին, այլեւ հետաձգված տարբերակով 2012-ի հունվարին: Երեկ վերջապես կայացած հանդիպումը նախ մեկնարկել է երկկողմ ձեւաչափում, ապա նաեւ եռակողմ, որն էլ արտաքին գերատեսչությունների ղեկավարներն ավարտել են Նախիջեւանյան հռչակագրի ստորագրմամբ:

Թե ինչ է նշվում հռչակագրում, տեղեկություն չի հաղորդվում: Դրա փոխարեն համատեղ ասուլիսից ադրբեջանական լրատվամիջոցները փոխանցում են, որ Իրանի արտգործնախարար Սալեհին կրկին հիշեցրել է ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորմանը կողմնակից լինելու մասին: «Իրանը կողմ է ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ միջազգային նորմերի եւ սկզբունքների հիման վրա», ասել է Ալի Աքպեր Սալեհին, ավելացնելով, որ Իրանը խաղաղության վերականգնում ու կայունություն է ցանկանում տարածաշրջանում:

Հայաստանին աջակցության մասին հարցին Սալեհին Նախիջեւանում հայտարարել է, թե պետք չէ ամեն ինչում հավատալ մամուլին ու պետք չէ հենվել մամուլի տեղեկությունների վրա, հավելելով, թե Իրանի ու Ադրբեջանի նախագահները «եղբայրական հարաբերություններ ունեն»:

Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավարն էլ, իր հերթին, հույս է հայտնել, թե «բոլոր վիճելի հարցերը Հարավային Կովկասում լուծում կգտնեն, մասնավորապես, ադրբեջանական տարածքների օկուպացիան»: «Այդուհետեւ Հայաստանի, Վրաստանի եւ Ռուսաստանի հետ մենք կկարողանանք անցնել հարաբերությունների զարգացման նոր մակարդակ», ասել է Դավութօղլուն, որի աշխարհագրական կամ քաղաքական պատկերացմամբ ոչ միայն Թուրքիան է «մտել» Հարավային Կովկաս, այլեւ Ռուսաստանը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ

## Ընթացիկ

# «Անխորհուրդ» միամսյակը

Թե կանանց նվիրված միամսյակն ուժի մեջ մտնելուց հետո ի՞նչ փոխեց կանանց կյանքում, պատասխանել չեն կարող ոչ կանայք, ոչ տղամարդիկ, ոչ էլ հորինողները: Թերեւս պատասխան չունենալն ավելի լավ է, քան բացասական պատասխանը:

Միամսյակի պատմությունն, ավելի ճիշտ՝ նախապատմությունը սկսվեց ապրիլի 7-ից, որը եկեղեցական տոնից զատ դարձավ աշխարհիկ տոն: Նրանց համար, ում թյուրըմբռնման մեջ է գցել տոնական միամսյակը ու ստվերել բուն տոների խորհուրդը, տեղեկացնենք, որ մարտի 8-ին նշվում է կանանց տոնը, իսկ ապրիլի 7-ին՝ մայրության, գեղեցկության եւ սիրո տոնը: Կանանց տոնը համարվում է միջազգային տոն, իսկ ապրիլի 7-ը հայերիս գնահատանքն է:

Սակայն մինչ մայրության, գեղեցկության տոնի հռչակումը եւ այսօր էլ ապրիլի 7-ին Հայ առաքելական եկեղեցին նշում է Սուրբ Աստվածածնի ավետման տոնը, այդ օրը նաեւ հռչակվել է մայրության օրհնության օր:

Կանանց ու աղջիկներին շնորհավորելու համար հայերիս 2 օրը բավարար չէին, միամսյակ հորինվեց, մի ամբողջ ամիս տղամարդկանց առջեւ է, կարող են շնորհավորել, երբ ուզենան: Նույնիսկ չգիտես ի՞նչ մտածես՝ այսպես թեթեւացրի՞ն տղամարդկանց ծախսերը, թե՞ հակառակը: Իսկ կանայք՝ սպասեն շնորհավորանքի մարտի 8-ի՞ն, թե՞ 10 օր անց: Իրականում 2 տոների հանդեպ անտարբերության ավելի լավ ձեւ հնարավոր չէր գտնել:

Երբ խոսում ենք կանանց միամսյակից, անմիջապես միտք են գալիս նաեւ լոտոների ու վիճակախաղերի գովազդները ու դրանք ցույց տվող հեռուստաընկերությունները, որոնք միամսյակի անունից ու մեր համբերությունից օգտվելով ամսվա մեջ հազարավոր անգամներ պարզապես չարչրկում են գեղեցկության տոնն էլ, մայրության միամսյակն էլ: Իսկ երբ զանգում ես համապատասխան հեռուստաընկերություն ու հայտնում գովազդի մասին կարծիքդ, պատասխանողը ոչ միայն հաշվի չի նստում կարծիքիդ հետ ու չի հասկանում քեզ նվիրված տոնի իմաստը, այլեւ կոպիտ պատասխանում է՝ Ձեզ դուր չի գալիս, փոխեք ալիքը:

Եվ ամեն տարի միամսյակ-միամսյակ ասելով անցկացնում ենք միամսյակը, որը նաեւ դառնում է հրաշալի ժամանակ «գենդերային հավասարությունից» նորից խոսելու, այդ թեմայով վիճելու եւ բանավիճելու համար: Որոշ հասարակական կազմակերպություններ էլ իրենց հերթին են օգտվում, կազմակերպում իրենց ասած «կլոր սեղանները», սակայն «կլոր սեղանից» միամսյակը չի արժեւորվում, ոչ էլ կնոջ իրավունքներն են դրանից ավելանում:

Իրականում կանայք եւ աղջիկները շնորհավորանքի սպասում են հենց այսօր, իսկ գնահատանքի ու սիրո՝ ոչ թե մի ամիս շարունակ, այլ ամեն օր:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Նա կին է, մայր, զինվոր, հայրենիքի պաշտպան...

*1-ին էջից*

**Արմենուհի Ավագյանին** շրջապատում անվանում են «հերոս մայր»: Երկու որդիները՝ Հենրիկն ու Հարությունը ծառայում են Շուշիում, երրորդ որդին՝ Հայկը, Վարդենիսում, չորրորդն էլ բանակ կգնա աշնանը: «Դժվար է որդիներից հեռու ապրելը: Հպարտություն եմ զգում, որովհետեւ Աստված ինձ չորս անգամ է օրհնել, պարգեւել չորս որդի, նվիրել հայրենիքի չորս պաշտպան», ասում է նա:

Երբ 1988-ին Մովսես Գորգիսյանը «Ազատության» հրապարակում Արցախի փրկության կոչեր էր անում՝ դառնալով ժամանակի հերոսն ու իր հետեւից տանելով մի ամբողջ ազգ, թիկունքում զգում էր աջակցություն ու հզոր ուժ: Իր բոլոր նախաձեռնություններում Մովսեսի կողքին էր կինը՝ Ռուզաննա Գորգիսյանը: «Մովսեսը ազգային-քաղաքական գործիչ էր: Երբ 1988-ին Ազգային ինքնորոշում միավորումը հիմնադրեց, ես էլ անդամագրվեցի այդ կազմակերպությանը: Քաղաքական դաշտում միասին ենք եղել, բայց Մովսեսը թողեց քաղաքական գործչի կարգավիճակն ու առաջնորդ լինելը եւ ազգի օրհասական պահին զենք վերցրեց՝ ապացուցելու, որ ոչ միայն խոսքով, այլեւ զենքով պետք է պաշտպանել հայրենիքը: Նա զենք վերցրեց, որ ապագայում այլեւ ոչ ոք զենքից չնահատակվի: Երբ Մովսեսն ասաց, որ գնում է ռազմի դաշտ, անհամաձայնության որեւէ խնդիր չեղավ, որովհետեւ երբ վտանգված է հայրենիքը, միայն զենքով կարելի է փրկել: Երբ մարդ կռվի դաշտ է գնում, չի գնում զոհվելու, գնում է հաղթելու: Ես հենց այդ գաղափարով Մովսեսին ճանապարհեցի ռազմի դաշտ», հիշում է **Ռուզաննա Գորգիսյանը**:

Կին ազատամարտիկներ, զինծառայողներ, զինվորների մայրեր, զոհված ազատամարտիկների մայրեր, կանայք: Երեկ նրանք պաշտպանության նախարարությունում էին: Պարգեւներ, մեդալներ, պատվոգրեր, ծաղիկներ հայրենիքի պաշտպանության ու հայրենասիրության համար ու բազմաթիվ մաղթանքներ անձամբ նախարար **Սեյրան Օհանյանից**: Բարձր գնահատելով կանանց դերը բանակի կյանքում՝ նախարարը հորդորում է առաջին հերթին հպարտ լինել. «Այսօրվա խաղաղությունն իրականություն է դարձել ձեր որդիների շնորհիվ: Դժվար, բայց պատվաբեր է զինվորի մայր լինելը: Հպարտացեք նրանցով», ասում է նախարարը:

Օհանյանը խոստովանում է, որ կինը ոչ միայն օջախի պահպանողն է, այլեւ տղամարդուն սատարողը, նրա տաք շունչը, թիկունքը: «Դա ապացուցվեց Արցախյան գոյապայքարի ժամանակ, երբ տղամարդու հետ կողք կողքի զենքը ձեռքին պայքարում էին նաեւ կանայք»: «Լսիր կնոջը, կատարիր հակառակը» կարգախոսը նախարարի համար ընդունելի չէ: «Եկել է պահը, երբ տղամարդն ու կինը պետք է հավասարաչափ ներգրավվեն: Կինը պետք է կառավարչական բոլոր ոլորտներում իր խոսքն ասի: Կան բազմաթիվ պաշտոններ, որտեղ կին զինծառայողներն ավելի պատասխանատվությամբ են աշխատում եւ բարեխիղճ են իրենց պարտականությունների կատարման ժամանակ», ասում է նախարարը:

Կանանց պարտադիր ժամկետային զինծառայության վերաբերյալ էլ նախարարի խորհուրդը հետեւյալն է. «Թող կանայք շատ տղաներ ունենան, որ բանակը միշտ համալրված լինի»:

# 2011-ին թմրամոլության հետ կապված իրավախախտումների աճ չի գրանցվել

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի նախագահությամբ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը:

Բացման խոսքում ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանն** ասել է. «Մենք այսօր պետք է ամփոփենք տարվա ընթացքում մեր գերատեսչությունների կատարած աշխատանքը, ինչը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ նախագահին: 2011թ.-ի ներկայացված ուսումնասիրությունները մեզ հիմք են տալիս պնդելու, որ մենք ունենք կայունության դրսեւորում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում: Գրանցված իրավախախտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած տարի գրանցվել է 1525 դեպք, եւ նախորդ տարվա համեմատ աճ չի արձանագրվել, եթե առգրավվել է 128 կգ թմրանյութ, ապա նախորդ տարվա հետ կապված որեւիցե բացասական դինամիկա մենք չունենք: Աճի բացակայությունն այս ոլորտում կատարվող իրավախախտումների արդեն իսկ դրական է, բայց մենք պետք է քայլեր գործադրենք, որ նրանց ծավալները հետեւողականորեն նվազեն: Ես կարծում եմ, որ միջգերատեսչական հանձնաժողովն այս ուղղությամբ ունի ասելիք եւ անելիք, եւ մենք պետք է կարողանանք ակտիվ աշխատել»:

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամները հանդես են եկել ՀՀ նախագահի համապատասխան կարգադրությամբ հաստատված «2009-2012թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի»՝ իրենց գերատեսչության մասով իրականացված աշխատանքների վերաբերյալ զեկույցներով: Բանախոսները փաստել են, որ 2011թ. ըստ ժամանակացույցի հաջողությամբ իրականացվել են ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները:

Քննարկվել է Եվրոմիության ֆինանսավորմամբ սոցիալ-հոգեբանական եւ խորհրդատվական աջակցություն տրամադրող վերականգնողական կենտրոնների ստեղծման ծրագիրը, որը մշակվել է մի շարք երկրների փորձի եւ օրենսդրության ուսումնասիրությամբ: Կենտրոնները կնպաստեն թմրամոլության հակում ունեցող անձանց հասարակական կյանքում ինտեգրվելու, մասնագիտական վերապատրաստումներով եւ աշխատանքով ապահովելու խնդիրների լուծմանը:

Քննարկվել են նաեւ թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով Ռուսաստանի եւ Եվրոմիության հատուկ կառույցներում ՀՀ պետական գերատեսչությունների ներկայացուցիչների վերապատրաստմանն առնչվող հարցեր:

ԵՊՄՀ

# Մանկավարժականի ուսանողները ծանոթացան կենսաթոշակային բարեփոխումներին

**Մանկավարժական համալսարանում ՀՀ ֆինանսների փոխնախարար Վարդան Արամյանը ներկայացրեց «Կենսաթոշակային բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով զեկույցը: Փոխնախարարը ուսանողներին մանրամասն ներկայացրեց ներկայիս կենսաթոշակային համակարգն ու բաշխողական կենսաթոշակային համակարգից բազմաստիճան կենսաթոշակային համակարգին անցնելու անհրաժեշտությունը:**




**Նրա հավաստմամբ՝ կուտակային համակարգի առավելությունները բազմաթիվ են: Այն հնարավորություն կտա յուրաքանչյուրին ունենալ անհատական կենսաթոշակային հաշիվ, ուր կկուտակվեն մասնակցի եկամտից գոյացած եւ պետության կատարած վճարները, ու հետո թույլ կտա ինքնուրույն ծրագրել իրենց ապագա թոշակը, կուտակել եւ գումար խնայել ապահով ծերության համար:**

**«Հայաստանում բազմաստիճան կենսաթոշակային համակարգը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչից՝ բաշխողական եւ կուտակային: Կառավարությունը բաշխողական համակարգի միջոցով բարձրացնելու է կենսաթոշակները առանց վտանգելու երկրի ֆինանսական կայունությունը»,- ասաց Վարդան Արամյանը, ավելացնելով, որ արված կուտակումները կապահովեն արժանապատիվ կենսաթոշակ եւ բարեկեցիկ ծերություն քաղաքացիների համար:**

**Հատուկ կրթության ֆակուլտետի շտկող մանկավարժության բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Լիլիթ Մնացականյանը կարեւորում է կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը: Ասում է, որ արժանապատիվ թոշակ ունենալու համար այս տարիից արդեն կմիանա ծրագրին, եւ հավելում, որ ավելորդ չէ ապրելով այսօր՝ մտածել նաեւ վաղվա մասին:**

**Հիշեցնենք, որ 2011 թվականից հանրապետությունում գործում է բազմաստիճան համակարգի կամավոր կուտակային բաղադրիչը, իսկ պարտադիր կուտակային բաղադրիչը կգործի 2014 թվականից:**

# ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Հանս-Յոխեն Շմիդթին

**ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Հանս-Յոխեն Շմիդթին:**

**Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են հայ-գերմանական փոխգործակցության հետագա զարգացմանն առնչվող հարցեր:**

**ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը կարեւորել է Հայաստան-Եվրոմիություն օրեցօր սերտացող հարաբերությունների համատեքստում նաեւ երկկողմ համագործակցության խթանման անհրաժեշտությունը ԵՄ անդամ երկրների, մասնավորապես Գերմանիայի հետ:**

**Կողմերը քննարկել են նաեւ Հայաստանում Եվրոմիության տեղեկատվական կենտրոնների ստեղծմանն առնչվող հարցեր, ինչպես նաեւ Հայաստանի սահմանային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրի ընթացքը:**

# Գործարկվեց ՀՀԿ նոր կայքը

**ՀՀԿ-ն երեկ լրագրողներին ներկայացրեց hhk.am կայքի նորացված, եռալեզու տարբերակը, որը, ըստ ՀՀԿ-ական պատգամավոր Արտակ Զաքարյանի, ընտրություններին ընդառաջ առավել հարստացված ու ընդլայնված հնարավորություններով է լուսաբանելու Հանրապետական կուսակցության գործունեությունը: Կայքում բավական շատ տեղեկատվություն է ներմուծվել, գործում են նոր բաժիններ կուսակցության եւ նրա նախագահի գործունեության մասին՝ անցյալ, ընթացիկ եւ ապագա: «Նամակ նախագահին» բաժնում ընթերցողը կարող է դիմել ՀՀԿ, հետեւաբար՝ երկրի նախագահին: Կայքը սոցիալական ցանցերում նույնպես ներկա է՝ այս իմաստով նույնպես հնարավոր կլինի այստեղ առկա տեղեկություններին արձագանքել, ըստ որում՝ հատկապես «Նամակ նախագահին» բաժնին ուղղված հարցերն անպայման լուծում են ստանալու: Լրագրողների համար միշտ խնդիր է այս կամ այն կուսակցությանը վերաբերող տեղեկությունն արագ ճշտել տվյալ կուսակցության կայքում, հատկապես ՀՀԿ-ի կայքը օպերատիվներից չէր: Այդ իմաստով Արտակ Զաքարյանը օպերատիվություն խոստացավ:**

**Ս. Խ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

# Անցուդարձ

# Մանուշակի առաջին փունջը ստանալու եւ նվիրելու օր

Մեր կյանքը սրընթաց փոխվում է: Փոխվում են սերնդի նախընտրությունները ու ճաշակները, փոխվում են ընդօրինակման արժանի կերպարները: Այս փոփոխություններին անմասն չէ հայ կինը, եւ ուզենք թե չուզենք՝ կնոջ նոր կերպար է ձեւավորվում վերջին տարիներին: Չենք ասում՝ սա լավ կամ վատ է, չենք ասում՝ հատկապես հայ կնոջ ո՞ր կերպարն է նախընտրելի: Կլիշեներն անցյալում են, ուղղակի արձանագրում ենք՝ հայ կնոջ կերպարը քսան տարի առաջվա համեմատ էական փոփոխություններ է կրել: Ի՞նչ գործոնների ազդեցությամբ եւ ո՞ր պատճառներով՝ դա այլ խնդիր է: Եվ արդյո՞ք այդ փոփոխությունները զուտ ժամանակի պարտադրանք են, թե՞ մետամորֆոզները շատ են՝ անհարկի ազդեցությունների պատճառով: Չենք էլ ասում, որ չպետք է փոխվի՝ հասարակությունը փոխվում է, կինը բացառություն չէ: Հայ կնոջ ներկա միջինացված կերպարի վրա իրենց կնիքն են դրել եւ ընտանեկան արժեքների ու ավանդույթների դերի նվազումը, և՛ ազատականացված բարքերը, եւ համացանցով ամեն օր նրա վրա թափվող տեղեկությունների բեռը, և՛ տղամարդկանց հետ հավասար կամ գուցե նրանցից ավելի փող վաստակելու հնարավորությունները: Այժմ ոչ մեկին ոչինչ չի պարտադրվում, ոչ ոք չի քարոզում կնոջ՝ որպես ընտանիքի հնազանդ անդամի կարգավիճակ, ինչպես առաջ, երբ կնոջ ստերեոտիպ-կերպարի՝ չգրված օրենքով պարտադրանք կար: Այժմ օրինակներ մատուցում է ինքը՝ կյանքը, իսկ մեր կյանքն այսօր հակադրությունների մի ողջ շղթա է, ու այնտեղ կգտնես եւ Սիլվա Համբարձումյանի նման էրոտաժային, եւ Անժելա Սարգսյանի նման բոհեմական կերպարներ, որոնք, իհարկե, հետեւորդներ կարող են գտնել, քանի որ հետեւելով հասարակության վերաբերմունքին առ այդպիսի կերպարները, կինը կարող է մտածել, որ ընդունելի է բոլոր միջոցներով հայտնի դառնալն ու ճանապարհ հարթելը, եւ միջոցների առաջ խտրություն չդնելով բիզնեսում եւ կարիերայում հաղթանակի հասնելը (Անժելայի դեմ ոչինչ չունենք, այլ ավելի շուտ՝ նրանից բոհեմուհի սարքող եւ այդ վիրուսով իգական սեռին վարակելու փորձ անող լրատվամիջոցների պահվածքից ենք հոգնել): Եվ քանի որ մեծ հաշվով հասարակությունը չի մերժում սկանդալներով եւ ուզած միջոցով ճանապարհ հարթող կանանց, չի դատապարտում կարելին ու ոչ կարելին, թացը խառնում է չորի հետ՝ կարող է այլ եզրահանգման գալ առհասարակ: Ասենք մի անգամ ծեծվելով ու այդպես հայտնի դառնալով՝ կինը կարող է մտածել պատգամավոր դառնալու մասին, առեւտրի երեւույթ մտցնելով այդ բոլորի մեջ, ու ոչ ոք հարց չի տա՝ ո՞ւր էր նա մինչ այդ, ի՞նչ գործեր է արել ոչ թե միայն իր, այլ հանրության համար: Այսինքն՝ այս ձեւը կարող է ճարպկություն համարվել եւ անգամ, աստված մի արասցե, ընդօրինակելի դառնալ:

Մանավանդ որ հիմա օրենք էլ ունենք գենդերային հավասարության մասին, ու չնայած այդ օրենքը վերաբերում է հավասարապես երկու սեռերին, բայց դրանով կանանց իրավունքներն ավելի հավասար են ստացվում, քան տղամարդկանցը: Իսկ ընդհանրապես՝ գենդեր բառը լավ զգացողություններ չի առաջացնում, քանի որ մեր իրականության մեջ դա նույնացվում է որոշ կազմակերպությունների կողմից կանանց թեմայով գրանտ «լվանալու» հետ, մինչդեռ հայ կնոջ խնդիրները վեր հանելը ոչ թե սկանդալների եւ սենսացիաների մասին պատմելը պիտի լիներ ԶԼՄ-ներով, այլ խորքով եւ հետեւողականորեն, պետական ծրագրով, ոչ կառավարական կազմակերպությունների օգնությամբ այդ խնդիրները կամաց-կամաց լուծելը: Դրանց մեջ եւ կանանց անհավասար վարձատրությունն է, եւ երիտասարդ մայրերի համար առավել լայն հնարավորությունների ստեղծումը, եւ 45-ից բարձր տարիքի կանանց աշխատանքի չվերցնելը բացառելուն ուղղված քայլերը (Սաակաշվիլին, օրինակ, օրենքով սոցվճարից ազատել է այն գործատուներին, որոնք ավագ տարիքի աշխատողներին չեն ազատում), եւ ղեկավար աշխատանքի նշանակելիս տղամարդկանց գերադասելու սովորույթից հրաժարվելը, ասպիրանտներին ընտրելիս իգական սեռի հանդեպ խտրականության չկիրառումը՝ անվերջ կարելի է թվել կանանց հանդեպ աննկատ կիրառվող խտրականության տեսակները:



Խորագա՝ մարտի 8-ի, պայծառ օրվա մասին էի, ախր, նյութ գրում. օր, որ շատերի համար առաջին սիրո խոստովանության, մանուշակի առաջին փունջը ստանալու կամ նվիրելու օր է հաճախ, գարնան սկզբի ուրախության հետ գիրկընդխառն օր: Չնայած նաեւ գալիս է հաջորդ միտքը, որ սոցիալական այս դժվար ժամանակի մեջ հաճախ հայ տղամարդկանց համար ծանր բեռ է դառնում այս տոնը հաճախ, բայց ընդհանուր առմամբ՝ մերոնք ելքը գտնում են, ու նվազագույնը ծաղիկ գոնե իրենց սիրելիներին նվիրում են:

Երեկ տարբեր մամուլի ասուլիսներում ինչում էին գնահատականներ կանանց դերի վերաբերյալ: Միայն ինչ արժեր ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում անցկացված քննարկման վերնագիրը՝ «Կանանց առաջխաղացման միջոցով դեպի կայուն զարգացում»:

Իրենք, հասարակությանը հայտնի կանայք գնահատականներում միասնական չէին: Միայն երկուսը ներկայացնենք. Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյանը նշում է, որ կանանց մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին հարստացնում է տվյալ երկիրը, չնայած այժմ արական քաղաքականության շրջանում ենք ապրում եւ քաղաքական կյանքում ներգրավվածությունը անպատվաբեր միջին մակարդակում է: Իսկ ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանը համոզված է, որ կանայք, ովքեր կարողանում են խոհանոցից դուրս գալ եւ իրացնել իրենց իրավունքները, հաջողության են հասնում: Համենայն դեպս՝ գոնե պատգամավոր կանանց թիվն այս անգամ կմեծանա, քանի որ օրենսդրությունն ավելի լայն քվոտա է նախատեսել՝ համամասնական ցուցակների յուրաքանչյուր վեցերորդը կին լինելու, այնպես որ այս անգամ 11 պատգամավորի փոխարեն գուցե մի 15-16-ն ունենանք: Այսպես թե այնպես, մեր հասարակության մեջ տարբեր ոլորտներում կայացած կանանց պակաս չկա, ամեն մեկը կարող է իր նախընտրելի կերպարից օրինակ վերցնել, աշխարհի հայտնի կանանց անցած ճանապարհն ու բնութագրերն էլ միշտ աչքն ի տես են: Օրինակ, մեր խորհրդարանի կին պատգամավորները բոլորն էլ այս կամ այն առումով ավելի ընդունելի պատգամավորի տիպար են, քան տղամարդ պատգամավորների մեծամասնությունը (խոսքը խորհրդարանական- պրոֆեսիոնալների մասին չէ, այլ գորշ մեծամասնության), մեր 11-ը եւ ավելի մոբիլ են, ավելի ակտիվ, ավելի նախաձեռնող՝ համարյա բոլորն էլ տարբեր առիթներով աչքի են ընկել: Հայ երիտասարդ կանանց մեջ բավական շատ գործարարներ կան, թեեւ նրանցից շատերը բողոքում են, որ իրենց մուտքը մեծ բիզնես հայ տղամարդիկ ամեն կերպ խոչընդոտում են: Վերջին շրջանում շատ են միջազգային ասպարեզ դուրս եկած երիտասարդ գիտնական հայ կանայք, կառավարության միջին օղակներում բավական պրոֆեսիոնալներ ունենք, թեեւ նախարարներից միայն երկուսն են կին:

Աչքալուսանք՝ գենդերային հավասարության առումով Հայաստանն իր հարեւաններից ավելի նպաստավոր դիրքում է՝ մի միջազգային կազմակերպություն կա, «Միջազգային ժամացույց», որն ամեն տարի հետազոտում եւ հրապարակում է կրթական, տնտեսական եւ քաղաքական ոլորտներում գենդերային հավասարության ինդեքսը. այս տարվա հետազոտությամբ Հայաստանի երիտասարդ տղամարդիկ եւ կանայք կրթական ոլորտում՝ 100 տոկոսանոց հավասարություն ունեն, տնտեսական եւ քաղաքական ասպարեզներում՝ 74:38 հարաբերակցություն է: Հայաստանի ցուցանիշը, փաստորեն, շատ քիչ է զիջում միջին եվրոպականին, մինչդեռ Թուրքիան, Ադրբեջանը եւ Վրաստանը բավական ցածր միավորներ են ստացել, այսինքն՝ այստեղ գենդերային հավասարությունը Հայաստանից բավական ցածր մակարդակի է, բա:

Իսկ ընդհանրապես՝ մարտի 8-ը մի տեսակ դեմոկրատական տոն է, որ վերաբերում է բոլոր կանանց՝ ահել ու ջահել, հարուստ ու աղքատ, ազգական ու հարեւան, ու այդ իմաստով մի տեսակ հավասարության զգացումով է համակում բոլորին, նրանք հավասարապես կարող են շնորհավորանքի սուբյեկտ դառնալ ու այդ օրը գոնե մոռանալ դժվար կյանքի անհավասարությունը: Եվ այդ տոնը հատկապես սիրելի է ամեն օր կյանքի հետ կռիվ տվող, իրենց հոգսը մի կերպ եւ հրաշքով հոգացող հայ կանանց՝ ազգի իգական կեսի մեծամասնությանը, որովհետեւ մի օր կարող են իրենց տոնի մեջ զգալու շռայլություն թույլ տալ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

## Գյուղվարկերի սուբսիդավորումը կշարունակվի

Կառավարության երեկվա որոշմամբ լրացուցիչ 7,5 մլրդ դրամ կտրամադրվի գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար: «Գործընթացն սկսվելու է ապրիլին: Սա սպասված որոշում է, մանավանդ գիտեք, որ մենք էժան գնով դիզվառելիք եւ պարարտանյութ ենք առաջարկում մեր գյուղացիներին, եւ այս ֆինանսական օժանդակությունը նրանց հնարավորություն կտա նաեւ այդ վճարումներն իրականացնել», ասաց վարչապետ Տիգրան Սարգսյանը:

## Նոր թաղամասերի եւ շինությունների համար՝ 113 մլն դրամ

Վերաբաշխում կատարելով 2012-ի պետբյուջեում՝ երեկ կառավարությունը գումար հատկացրեց քաղաքաշինության նախարարությանը՝ Մարալիկ քաղաքի 9 կիսակառույց բնակելի շենքերի շինարարության ավարտի, Գյումրու Մուշ-2 թաղամասի նոր դպրոցի, Լոռու մարզի Լեռնապատի Ե. Դալլաքյանի անվան միջնակարգ դպրոցի, Երեւանի Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի, Արարատի մարզի Վեդի քաղաքի մշակույթի տան եւ մի շարք այլ օբյեկտների հիմնանորոգման եւ կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար: Մեկ այլ որոշմամբ 113 մլն դրամ է հատկացվել աղետի գոտում կառուցված բազմաբնակարան շենքերի, բնակարանների, բնակելի տների եւ վերջիններիս կառուցապատման հողատարածքների պետական գրանցումն ապահովելու նպատակով:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանը հայտնեց, որ Հայաստանում հաշվառված է 311 երեխա, որից 111-ն առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ են, 200-ը՝ մանկատան շրջանավարտներ:

Վարչապետ **Տիգրան Սարգսյանն** առաջարկեց խնդրի լուծման համար օգտագործել անբնակ պետական շենքերը, ինչպես նաեւ անավարտ շինարարությունները: «Շիրակի մարզում ընդհանրապես այդ անավարտ շենքերը շատ են, պետք է դրանցով էլ զբաղվել, նաեւ մասնավոր հատվածին տրամադրված շենքեր կան, անավարտ են մնացել, բնակիչները լքել են երկիրը, բայց շենքերը մնացել են»:

## Նոր ավտոմայրուղի՝ Ծովակալ Իսակովի պողոտայից դեպի Լենինգրադյան փողոց

Կառավարությունը երեկ հավանություն տվեց Երեւանի քաղաքապետի՝ «Սահակյանշին» ընկերությանն ուղղակի վաճառքի ձեւով Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում Ծովակալ Իսակովի պողոտային հարող հատվածում 5,3 հա հողամասի օտարման առաջարկությանը պայմանով, որ հողամասի օտարումից ստացված միջոցներն ուղղվելու են Ծովակալ Իսակովի պողոտայի եւ Լենինգրադյան փողոցի միջեւ ընկած հատվածում 2,6 կմ երկարությամբ ավտոմայրուղու եւ շուրջ 1,9 կմ ուղետարների կառուցմանը: Հավանության արժանացավ նաեւ ավտոմայրուղու կառուցման ներդրումային ծրագիրը, որը նախատեսվում է իրականացնել 3-7 տարում:

## Արդարադատության նախարարության այրված շենքի փոխարեն՝ նախարարությունների նոր շենք

Երեւանի քաղաքապետին կառավարության երեկվա որոշմամբ լիազորվել է իրականացնել Երեւանի Վազգեն Սարգսյան-3 հասցեում գտնվող արդարադատության նախարարության այրված շենքի եւ Զաքյան 2/1 հասցեում գտնվող կաթսայատան եւ լաբորատոր շենքի քանդման աշխատանքները: Դրանց տեղում կառուցվելու է նոր շենք: Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշեց, որ նոր շենքի ճարտարապետական լուծումները կներկայացվեն հանրության հրապարակային քննարկմանը. «Մենք նաեւ մտադիր ենք այդտեղ տեղափոխել մեր գերատեսչություններից մի քանիսը՝ արտաքին գործերի, էներգետիկայի եւ բնական պաշարների, տարածքային կառավարման նախարարությունները: Այնպես որ, առաջին քայլն ենք անում այդ ուղղությամբ, պետք է նոր շենքի ճարտարապետական լուծումները հաստատենք: Երկու անգամ ավելի շատ տարածք կստանանք եւ կբարելավենք վիճակը»:

## Անշարժ գույքի օտարման ժամանակ չարաշահումները կբացառվեն

Մի քանի օրենքներում կառավարության առաջարկած փոփոխություններով կկարգավորվեն կառուցվող շինությունների նկատմամբ իրավունքների գրանցման իրավական հիմքերը: Դրանով կբացառվեն դեպքերը, երբ նույն բնակարանը վաճառվում էր մի քանի անգամ:

Ա. Ս.

## Գրքերի գները կվերադառնան նույն մակարդակ

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** երեկ դարձյալ անդրադարձավ գրքերի թանկացմանը, հիշեցնելով, որ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին առաջարկվել էր ուսումնասիրել հարցը եւ ներկայացնել վերլուծության արդյունքը: Ի պատասխան՝ հանձնաժողովի նախագահ **Արտակ Շաբոյանը** հայտնեց, որ ուսումնասիրությամբ պարզվել է, որ գրքերի գնի բարձրացումը հիմնականում պայմանավորված էր այս ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների սխալ ընկալմամբ: «Ֆինանսների նախարարությունն արդեն տվել է համապատասխան պաշտոնական պարզաբանում, որն ամբողջությամբ կարգավորում է խնդիրը: Տնտեսվարողները գոհ են պաշտոնական պարզաբանումից, որի արդյունքում համապատասխան փոփոխություններ կկատարեն իրենց հաշվառման ընթացակարգերում, եւ դրա արդյունքում առաջիկա մի քանի օրերի ընթացքում այն գրքերի գները, որոնք բարձրացել էին այս մի քանի օրերի ընթացքում, կվերադառնան նույն մակարդակ: Այդուհանդերձ, օգտվելով առիթից՝ կոչ եմ անում բոլոր սպառողներին՝ եթե կտեսնեն, որ գրքերի գները, որոնք այս խնդրի կապակցությամբ բարձրացել են, չեն փոխվի, կմնան նույն մակարդակին, անպայման դիմել հանձնաժողովին», նշեց նա:

Ա. Ս.

## Ուղղում

Մեր նախորդ՝ մարտի 7-ի համարում «Սամվել Կարապետյան. Մեր միակ հարստությունը մեր հայրենիքն է» վերնագրով հոդվածի հեղինակի անունը, տպագրական թյուրիմացության հետեւանքով սխալ է արձանագրվել, որի համար խնդրում ենք հեղինակի՝ **Գոհար Բոտոյանի** եւ ընթերցողների ներողամտությունը:

# «Երբ ես ճաշարանում եմ, զինվորը չի համարձակվում գլխարկով ճաշարան մտնել»

***Երեք երեխաների մայր եւ ենթասպա Անահիտ Առաքելյանը Քանաքեռի զորամասի ճաշարանի պետն է: Ծննդով գորիսեցի Անահիտը 27 տարեկան էր, երբ զինվորական համազգեստ հագավ ու դիրքեր բարձրացավ: Թեեւ որոշ խոհարարներ նախընտրում են չբացահայտել իրենց գաղտնիքները, սակայն Անահիտ Առաքելյանը «Ազգ» օրաթերթի համար բացառություն արեց ու բացահայտեց իր կյանքի հետաքրքրական դրվագներն ու խոհարարական հաջողության գաղտնիքը:***



**- Ե՞րբ ներգրավվեցիք ռազմական գործողություններում:**

- Առաջին իսկ օրվանից՝ 1988 թվականից: Գորիսում էի բնակվում, սկզբնական շրջանում ակտիվորեն մասնակցում էի հանրահավաքներին, հետագայում անդամագրվեցի Գորիսի ինքնապաշտպանական ջոկատին: Մասնակցել եմ Շուռնուխի, Կոռնիձորի ինքնապաշտպանական մարտերին ու միեւնույն ժամանակ զգաղվել եմ բռնագաղթածների տեղավորման հարցերով:

**- Կպատմե՞ք մի դեպք այդ տարիներից:**

- Հիշում եմ, 1989 թ. դեկտեմբերն էր, դեռ անփորձ էի, զենքի հետ ընդհանրապես չէի շփվել, կրտսեր աղջիկս երեք տարեկան էր, մեծ տուփով տիկնիկ էի առել նրա համար: Այդ տարիներին անվտանգության աշխատակիցները ստուգումներ էին անցկացնում, մեր ջոկատի տղաները պետք է նռնակներ տեղափոխեին, տուփից տիկնիկը հանել էին, նռնակներ լցրել, ու ես այդ նռնակներով լի արկղը ձեռքիս կանգառում սպասում էի, հետո որ տեսա տուփի մեջ տիկնիկը չէ, անակնկալի եկա, վտանգը չէի գիտակցում: Լավ կրակում եմ, սակայն այդ տարիներին զենք չեմ օգտագործել, մեր շրջանում պետք չեղավ զենք վերցնել: Երբ Խնձորեսկ գյուղի ջոկատները գալիս էին, հաճախ էինք զրուցում հրամանատարների հետ, նրանք միշտ կրկնում էին. «Քանի դեռ մենք կանք, հայ կինը չպետք է զենք վերցնի»: Սակայն հարկ եղած դեպքում ես միշտ պատրաստ եմ եղել զենքը ձեռքիս մարտի դաշտ գնալ:

**- Այժմ զինված ուժերի զորամասերից մեկի ճաշարանի պետն եք: Ընդհանրապես խոհարարները չեն բացահայտում պատրաստելու գաղտնիքը, բայց այս պարագայում բացառություն անենք: 2011-ին Քանաքեռի զորամասի Ձեր ղեկավարած ճաշարանը ճանաչվեց լավագույնը: Որն է ձեր գաղտնիքը:**

- Այդ գնահատականը արձանագրվել է հանկարծակի ստուգումներով՝ զորքերի տարբեր ծառայությունների կողմից: Տարվա արդյունքների ամփոփմամբ ճաշարանը ճանաչվեց լավագույնը, անցյալ տարի ինձ ներկայացրին մեդալի: Այն ճաշարանները, որտեղ աշխատել եմ, միշտ արժանացել են լավագույնի կոչմանը: Բանակում էական չէ, թե ինչ կոչում ունես: Նա, ով հրաման է տալիս, պետք է տեսնի դրա արդյունքը, այսինքն՝ պետք է կարողանալ հրաման տալ, ես կարողանում եմ պահանջել: Եվ երկրորդ՝ պետք է սիրել աշխատանքը ու սրտացավ լինել: Այժմ մայրս ծեր է, բայց ժամանակին իմ խնդրանքով նա կանաչի էր չորացնում, որ զինվորների ճաշի մեջ լցնեմ, ավելի համեղ լինի: Պետք է սրտացավ լինել, գործը հարկավոր է սիրով անել. զինվորներիս միշտ ասում եմ. «Ես ձեզ համար ամեն ինչ անում եմ, սակայն իմ երեխաների համար անգամ ճաշ չեմ հասցնում պատրաստել»: Աղջկաս էլ մի քանի օր առաջ ասում էի, որ մեր ճաշարանի կաթսաներն ավելի մաքուր են, քան տանը: Իսկ իմ խոհարարներին հորդորում եմ. «Արեք այնպես, ինչպես կանեիք ձեր երեխայի համար»: Զինվորը նույնպես իմ երեխան է, եկել եմ որդիներիս համար ճաշ պատրաստելու: Իհարկե, կան խոհարարական հմտություններ, որոնք նույնպես կիրառում եմ:

**- Ընդհանրապես ընդունված է ասել, որ բանակը տղամարդու գործն է: Ինչպե՞ս կգնահատեք կնոջ դերը այս համակարգում:**

- Պատերազմի ժամանակ շատ կարեւոր էր կնոջ ներկայությունը: Հիշում եմ, 1991 թվականի նոյեմբերի 20-ն էր, երբ ժամանեցինք Կոռնիձորի շտաբ, տեսանք՝ տղաները սոված են, անմիջապես ինքնաեռ բերեցինք, սուրճ եւ թեյ պատրաստեցինք, գյուղացիները կարտոֆիլ տվեցին, որ կերակուր պատրաստենք: Միջանցքում լսեցինք Վազգեն Սարգսյանի ձայնը, քաջալերում էր տղաներին, նրանցից մեկն ասաց, որ իրավիճակը վատ է, պահն էլ՝ չափազանց անհարմար (մենք պատրաստվում էինք հարձակման): Վազգենը դուռը բացեց, մենք այդ պահին թեյ էինք լցնում, նայեց մեզ ու ասաց. «Բա ասում եք՝ վտանգավոր է, վատ վիճակ է, հիմա այստեղ կանայք կան, եթե նրանց համար վտանգավոր չէ, էլ ի՞նչ վտանգի մասին եք խոսում»: Կնոջ ներկայությամբ տղամարդիկ ավելի զգաստ են լինում, կան բաներ, որ ավելի գեղեցիկ են կատարում, առավել խիզախ են եւ զուսպ: Ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ այժմ կնոջ դերը չափազանց կարեւոր է: Երբ ես ճաշարանում եմ, զինվորը չի համարձակվում գլխարկով ճաշարան մտնել կամ այլ կարգապահական նորմ խախտել: Սիրում եմ կարգապահությունը: Միշտ զինվորներին ասում եմ. «Դրսում ով ուզում եք եղեք, ճաշարան մի մարդու պես մտնում եք ու դուրս գալիս»:



**ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ**

# Կանայք՝ մեր կյանքում, երբեմն սիրված, երբեմն խոցելի, հաճախ անտեսված...

*1-ին էջից*

Մարդկության պատմության մեջ XX դարը, իհարկե, շրջադարձային եղավ, ոչ միայն աշխարհաքաղաքականորեն, այն հեղափոխական էր թե՛ մշակույթի, արվեստի, թե՛ գիտության, թե՛ հասարակական, թե՛ սեռական ազատագրման, ամեն առումով, եւ՝ կանանց իրավունքների ձեռքբերման նաեւ:

Հիմա մարդկային հասարակության բնույթը փոխված է: Կանանց էմանսիպացիոն շարժումը լիովին ազատագրել է իրենց, գուցե փոքր-ինչ ավելի: Բայց եւ կարծես պատասխանն է նախորդ դարաշրջաններում նրանց բռնադատման եւ դաժան կապանքների: Երբեմն մտածում ես՝ եթե կանանց տրվեր աշխարհը ղեկավարելու մենաշնորհը, մարդկության ճակատագիրը միանգամայն այլ ընթացք կունենար, գուցե գութը, խիղճը այսքան ցամաքած չլինեին, գոնե պատերազմները կպակասեին՝ հենց միայն կնոջ բնությունից ելնելով, որովհետեւ մայրությունը, այն ինստինկտները, որ մայրացող կնոջ մեջ են հայտնվում, նրան դարձնում են ավելի հոգատար, ջերմ, մեղմ, բայց եւ ավելի դիմացկուն, իր դյուրաբեկ փխրունությամբ հանդերձ, զավակին պաշտպանելու ֆիզիկական ու հոգեկան անբացատրելի կորովով: Մայրությունն ինքը կյանքի խորհրդանիշն է, կինը՝ ինքը երկրային էներգիայի կրողն է, մայր հողը: (Այդուհանդերձ, մարդկային քաղաքակրթության պատմությունը ստեղծում եւ գրում է այր մարդը՝ կյանքի բոլոր ասպարեզներում: Չնայած նրանք սիրում են կրկնել, թե կանայք զարդարում են իրենց կյանքը, թե կինը գեղեցկացնում է մարդկային աշխարհը, ինչպես ծաղիկը՝ բնությունը: Սեղանների շուրջը մայրերն ու կանայք անպայման հիշատակվում են՝ հաճախ բառերի այնպիսի ճոխ շարանով, որ գլուխդ պտտվում է, բայց իրականության մեջ կանայք անպաշտպան են՝ հատկապես տղամարդկանցից):





Հայ կանայք, իհարկե, առանձնահատուկ որակներ չունեն, նրանք էլ կանացի բնության ընդհանուր կրողներ են: Սակայն օրերի ներկա հոսքում նրանք անհամեմատ ոչ միայն տոկուն, նաեւ արժանապատիվ են, ավելի առաջադեմ հայացքների կրող, ավելի ճկուն՝ սոցիալ-տնտեսական այս նեղ լաբիրինթոսից որեւէ ձեւով իրենց ընտանիքը, զավակներին ապրեցնող: Մաշտոցի պուրակի բնապահպանական վերջին իրադարձություններին կանացի ձայնը ոչ միայն ավելի ակտիվ էր կամ հնչեղ, նաեւ ավելի սուր, համարձակ, խելացի ու նպատակային: Այգի եկած մի պաշտոնյայի երեւանցի բնակչուհին, թեեւ լարված, գրգռված ձայնով, բայց այնպես դիմեց, որ նա գետինը մտներ, ավելի լավ էր. «Տեսեք՝ ինչի եք վերածել մեր երկիրը. հայ տղամարդուն անողնաշար-փալաս եք դարձրել: Կանայք էլ որ չլինեն, երկիրը վաղուց թուրքերին էիք տվել»:

Որքան փորձեցի մի կնոջ կերպար առանձնացնել, չհաջողվեց, բոլորն այնքան նման են իրար, ինչպես մեր կյանքը, մեր ամենօրյա զբաղմունքը (առեւտրային սեղանների շուրջը կանգնած հազարավոր կանայք): Աչքերիս առաջ հայտնվեց մետրոյի «Բարեկամություն» կայարանի գետնուղում երեկոյան հաճախ հայտնվող աղջիկը: Անօթեւան մեկն է, մտացիր, անլվա, կիսափնթի. կանգնում է պատերին հենված, անկանոն տոպրակները կողքը շարած, ասես ուր որ է, մեկնելու է: Փակ կրպակների շուրջը խմբված տղաներ կան, գարեջրի շիշը ձեռքներին՝ երեւանյան կեցվածքով, կիսածուռ կանգնած, սեւ հագնված, մյուս կողմում հսկիչ-ոստիկանների խումբն է, գրեթե ոչնչով նախորդից չտարբերվող: Աղջիկը սրանց շրջապատում ասես ֆիլմի պերսոնաժ լինի, չնայած անխնամ արտաքինին, դժվար չէ նկատել կանոնավոր դիմագծերը, մարմնի բարեձեւությունը: Դառնում է շրջապատի տղաների ծաղրանքի կամ «ուրախության» առարկան, սրանց անվայելուչ խոսքերին քթի տակ մրթմրթալով, պատասխանում է նույնքան անվայելուչ: Մենակ է, լքված:

Եթե նայենք մեր շուրջը, դժվար չէ տեսնել սոցիալական այն խավը՝ խոցելի, որ միայնակ կանայք են կազմում: Եվ նրանք շատ են՝ այրիացած կամ ամուսնալուծված եւ կամ էլ արտագնա աշխատանքի մեկնած արդեն չեկած ամուսիններով, որոնց մի զգալի մաս վաղուց մոռացել է իրենց էլ, զավակներին էլ: Այս անօրեն պայմաններում, անկարեկից մթնոլորտում նրանց փխրուն ուսերին է ընկնում մենակ երեխա մեծացնելու, դաստիարակելու, ուսման տալու, այսինքն՝ ապագա հասարակությունը պատրաստելու դժվարին պատասխանատվությունը: Եվ ինչպիսի՜ ճակատագիր, ի՜նչ ճանապարհ են անցնում նրանք, մանավանդ երբ արժանապատիվ են ուզում ապրել եւ արժանապատիվ զավակ մեծացնել, հաճախ հայտնվում են կյանքի ոչ միայն սոցիալական, նաեւ բարոյական ածելու եզրագծերին, միմիայն իրենց հայտնի ներքին երկընտրանքներով, ցավով ու պայքարով, արհամարհանքով ու ներողամտությամբ: Եվ սա իրոք այդպես է, սա մի փակ աշխարհ է, որտեղ տղամարդկային հայացքը թափանցել անկարող է, սա զուտ կանացի հուզաշխարհին, հոգեկերտվածքին, իր բնույթին ներհատուկ ինտիմ վիճակ է՝ սեփական առավելությունը, հարստությունը, պարտությունն ու... ժպիտը:

Շուրջը եթե լավ նայենք, կանայք են մեր հասարակության առաջ մղող ուժը, կրթության ոլորտում այդպես է, առողջապահության մեջ՝ նույնպես, ընտանիքում էլ: Նրանք ավելի ներկայանալի են, ավելի ինքնավստահ, զարգացած եւ ուսանող-երիտասարդության մեջ էլ այդպես է: Գուցե այս պատճառով է, որ միայն մեր երկրում, մեր հասարակության մեջ է կնոջ պատվո միամսյակ հռչակված. Մարտի 8-ից ապրիլի 7-ը: Ժամանակային այս հատվածի սկիզբը սոցիալիստների առաջադրած ու ընդունած կանանց միջազգային օրն է, եզրափակողը կրոնա-եկեղեցական Ավետման խորհրդի տոնը՝ հռչակված որպես մայրության եւ գեղեցկության օր: Որտեղի՞ց որտեղ: (Հայ տղամարդկանց չարչարանաց միամսյակը. իբր թե սկսվեց):

Այնպես որ սիրելի կանայք. շարունակեք լինել դիմացկուն, ի հեճուկս տղամարդկանց հայացքների ու արարքների, իհարկե, գեղեցիկ եւ ամենակարեւորը՝ խորհրդավոր: Բայց ոչ երբեք՝ կեղծ:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

ԱԶԳ **Միջազգային**

# «Էրկու տղա, էրկուսն էլ՝ մի խելքի»

Թե ինչո՞ւ Միխեիլ Սաակաշվիլին որոշեց «պաշտոնական այցով» ուղեւորվել Բաքու, հատկապես՝ այս «խառը ժամանակներում», երբ տարբերաբար լուրեր են շրջանառվում, թե հակաիրանական «կոալիցիան» ոչ այն է՝ Վրաստանն է «պլացդարմ» ընտրել, ոչ այն է՝ Ադրբեջանը, հավանաբար «մտոք» վերլուծաբանների իմանալիքն է: Կամ՝ թեմա, որի շուրջը նրանք պիտի «նիզակներ փշրեն»: Ավելի առարկայական է թվում, որ Սաակաշվիլին Բաքու ուղեւորվեց գրեթե Վազիանիի ռազմափորձադաշտից, որտեղ անձամբ էր փորձարկել «վրաստանյան արտադրության «Լազիկա» զրահամեքենան եւ համազարկային կրակի «հայրենական արտադրության» ցուցանմուշը:

Ըստ հարկի, կարելի է երեւույթը տեղափոխել նաեւ սյուռռեալիզմի հարթություն, եթե բատոնո Միխեիլի հանգրվանը ոչ թե Բաքուն, այլ՝ Երուսաղեմը լիներ: Այդքան «պլոճիկ», ըստ երեւույթին, Սաակաշվիլին չունի: Այդ իսկ պատճառով Թիֆլիս-Ավետյաց երկիր ճանապարհին ընտրել է «միջանկյալ կետ»՝ հարավկովկասյանի մայրաքաղաք, որ, ճիշտ է, անվանապես դեռ անկախ երկիր է նշում, բայց փաստացիորեն «գրավված է» Իրանով շահագրգռված պետությունների գաղտնի ծառայություններից:

Հատուկ ցինիզմ պետք չէ, որ Վրաստանի նախագահը հյուրընկալվի Բաքվում, իսկ Թուրքիա-Իրան-Ադրբեջան եռյակի արտգործնախարարներին «մեծահոգաբար» հանդիպման վայր թողնվի Նախիջեւանը: Իբր՝ այդպես ավելի «ցցուն է դառնում Հայաստանի բացակայությունը», բայց ի՞նչ գիտես՝ ով եւ ինչ զգացողություններով է Նախիջեւան ոտք դնում:

Բայց պետք էր, չէ՞, որ բատոնո Միխեիլն ու Իլհամ-«բեյը» նման «չարաճճիությունների» համար գտնեին «հոդաբաշխ բացատրություն»: Թե չէ մեկ էլ տեսար՝ «բռնվեցին», ինչպես «տղայական արարքի վրա» դեռահասներ: Ու ահա խելքներին փչել է աշխարհով մեկ տարածել, որ «մտադիր են «Եվրո-2020թ. ֆուտբոլային մրցաշարը հյուրընկալել»: Այն էլ՝ «օրթախ»՝ մի խաղը՝ Թիֆլիսում, մյուսը՝ Բաքվում: Կամ՝ ընդհակառակը: Տարբերություն իրենք չեն տեսնում:

Աշխարհում, իհարկե, նման «չարաճճիություններ» երբեմն լինում են: Ոչ էլ ուզում ենք, որ «միասնական հայտը» մերժվի: Ընդհակառակը՝ ինչքան Ադրբեջանը մարդկայնանա, շահը միայն իրենը չէ, մերն էլ է դառնում: Հաճելի է, ի վերջո, գործ ունենալ քաղաքակրթվելու բուռն ցանկություն դրսեւորողի, քան թե բռի մարդու հետ:

Այդուհանդերձ, մի՞թե երկու երկրների համապատասխան կառույցները չէին կարող քննարկել «համատեղ հայտի» խնդիրը: Պե՞տք էր, որ դրա համար բատոնո Միխեիլը ժամանակ ծախսեր եւ հասներ Բաքու: Իհարկե՝ ոչ: Բայց որ վեր կացել-եկել է, ուրեմն խնդիրը «Եվրո-2020»-ը չէ: Վրաստանի նախագահը նոր է Բարաք Օբամայի ընդունելությանն արժանացել, իսկ Իլհամ Ալիեւը դեռ նախապատրաստվում է դրան:

Ոչ ոք նրան Վաշինգտոն իհարկե չի հրավիրել: Սեուլում կայանալիք միջուկային անվտանգության հարցերով խորհրդաժողովի «կողասրահներում» է ենթադրվում Օբամա- Ալիեւ «հանդիպումը»: Նախորդին, որ Վաշինգտոնում էր, Իլհամ Ալիեւը հրավիրված չէր: Այս անգամ միստր Օբաման կարծես «ներելու» մտադրություն ունի: Եվ Միխեիլ Սաակաշվիլին Բաքու էր մեկնել, որպեսզի «թյուրիմացությունները հարթի»:

Չէ՞ որ երկուսն էլ անհամբեր սպասում են, որ «Իրանը պատժվի»: Երբ ասում են՝ «սպորտը քաղաքականություն է»,- թերահավատներն ուսերն են թոթվում: Մինչդեռ Միխեիլ Սաակաշվիլին եւ Իլհամ Ալիեւը, թվում է, բոլոր տարակուսանքների պատասխանը տվեցին՝ «բանակցում ենք, որպեսզի «Եվրո- 2020»-ի միասնական հայտ ներկայացնենք»: Բայց քաղաքականությունը «լակոտություն» չէ: Եվ հարկ էր ամեն ինչ այնպես անել, որ գոնե Թուրքիա-Ադրբեջան-Իրան՝ արտգործնախարարների մակարդակով բանակցությունները նախորդեին կամ հաջորդեին Ալիեւ-Սաակաշվիլի դեմ առ դեմ հանդիպմանը:

Նաեւ՝ կարելի էր Վրաստանի նախագահին մի ինչ-որ Գուրամ Մարխուլիայի հարցով չանհանգստացնել, մի «պրոֆեսորի», որին վերջերս համալսարանից հեռացրել են: Իսկ Բաքվում վերցրել- երկու տասնյակից ավելի ակադեմիկոս-դոկտորների ստորագրությամբ բատոնո Միխեիլին են դիմել, թե «ինչո՞ւ պիտի եղբայրական Վրաստանում գործից ազատվի Իլհամ Ալիեւից շքանշանի արժանացած Մարխուլիան»:

Ահա եւ Սաակաշվիլիին տված Իլհամ Ալիեւի պատասխանը. «Եթե, բատոնո Միխեիլ, քո երկրում հայերի ու Հայաստանի դեմ խոսող մարդուն զրկում են պրոֆեսորական ամբիոնից, եւ դու լռում ես, ես քեզ ինչպե՞ս հավատամ»: Ի՞նչ է պատասխանելու Միխեիլ Սաակաշվիլին՝ իր գործն է: Մի «Մարխուլիա» ավել կամ պակաս՝ ոչինչ չի փոխվում: Մինչդեռ երբ երկու իբր թե «հասուն» տղա նստում, աշխարհի աչքի առաջ իրենց «խաղը» խաղում են այնպես, կարծես Թիֆլիսի մի «դուքանում» են, ոչ ոք իրենց չի տեսնում եւ «ստավկան» էլ չգիտի՝ ահա դրանից հետո մնում է մեր ժողովրդական երգի բառերը, հանուն առիթի, մի փոքր ձեւափոխել.

- Էրկու տղա, էրկուսն էլ՝ մի խելքի:- Տեսնես ով է ում իր «դամբը» քաշելու:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Լիբիայի նավթառատ շրջանն ինքնավարություն է հռչակել



Լիբիայում նավթով ամենից հարուստ շրջանը՝ Կիրենաիկան, իրեն ինքնավար է հռչակել: Համապատասխան որոշում է ընդունվել տարածաշրջանի կենտրոն Բենգազի քաղաքում:

Տեղաբնակների կարծիքով, երկրի ներկայիս վարչական բաժանումը հաշվի չի առնում բոլոր քաղաքացիների շահերը: «Ռոսիա 24» հեռուստաալիքը հաղորդում է, որ Կիրենաիկայում պատրաստվում են ստեղծել սեփական նախարարություններ եւ կառավարման մարմիններ, ինչպես նաեւ ինքնուրույնաբար տնօրինել էներգառեսուրսները:

Մինչեւ վերջերս ֆինանսական միջոցներն ուղարկվում էին Տրիպոլի: Այնտեղ, իհարկե, դժգոհ են նավթառատ տարածաշրջանի ինքնավարության հռչակումից:

Անցումային ազգային խորհրդի ղեկավար Մուստաֆա Աբդել Ջալիլը հայտարարել է, որ ինքը «անչափ զարմացած» է Լիբիան մասնատելու կոչերից: «Դա սպառնում է երկրի ինքնիշխանությանը եւ ԱԱԽ՝ որպես պաշտոնական իշխանության օրինականությանը: Մենք բոլոր քաղաքացիներին միասնության կոչ ենք անում: Ազնիվ մարդը չի կարող պաշտպանել երկրի փլուզման գաղափարը», ավելացրել է նա:

Վերլուծաբանները քանիցս նախազգուշացրել էին Լիբիայի տարածքային մասնատման վտանգի մասին: Տրիպոլին միշտ համարվել է քաղաքական մայրաքաղաք, Բենգազին՝ ֆինանսական: Նավթահանույթի եկամուտների վերաբաշխումը մշտապես հարուցում էր Կիրենաիկայի բնակչության դժգոհությունը, եւ ինքնավարության ստեղծումը ուժգին կհարվածի ամբողջ Լիբիայի բյուջեին:

ՓԱՐԻԶ

# Սարկոզին կսահմանափակի ներգաղթը

**Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին France 2 հեռուստաալիքի ուղիղ եթերում կազմակերպված բանավեճի ժամանակ հայտարարել է, որ երկրում չափազանց շատ են ներգաղթյալները:**

**Նրա խոսքերով՝ եկվորների ինտեգրման համակարգը գործում է ավելի ու ավելի վատ, քանի որ պետությունը նման մեծ թվով ներգաղթյալների համար չի կարող գտնել կացարան, աշխատանք եւ դպրոցներ:**

**Սարկոզին կրկնել է եկվորների հոսքը կիսով չափ կրճատելու իր նախընտրական խոստումը: Նրա կարծիքով, դա հնարավոր կլինի իրագործել առաջիկա հինգ տարում:**

**Նախագահը նաեւ առաջարկել է աղքատների սոցիալական օգնության համակարգը դժվարամատչելի դարձնել օտարերկրացիների համար, հաղորդում է Ֆրանսպրեսը: Առաջարկվում է, որ նրանք «Ակտիվ համերաշխության նպաստ» եւ ծերության նպաստ կարողանան ստանալ Ֆրանսիայի տարածքում 10 տարվա օրինական կեցությունից եւ 5 տարվա աշխատանքից հետո:**

**Փետրվարի կեսերին 57-ամյա Սարկոզին պաշտոնապես հայտարարեց, որ մտադիր է վերընտրվել նախագահի պաշտոնում: Ընտրությունների առաջին փուլը տեղի կունենա ապրիլի 22-ին: Սարկոզիի գլխավոր մրցակիցը սոցիալիստների առաջնորդ Ֆրանսուա Օլանդն է, որը ներկայումս ժողովրդականությամբ գերազանցում է գործող նախագահին:**

**Ի դեպ, ինքը՝ Նիկոլա Պոլ Ստեֆան Սարկոզի դը Նաժի-Բոկսան ծնվել է Փարիզում հունգարացի ներգաղթյալի եւ հրեական ծագումով ֆրանսուհու ընտանիքում:**

# Ռոմնին հաղթեց 10 նահանգից 6-ի նախնական ընտրություններում

**ԱՄՆ նախագահության հանրապետական թեկնածուների միջեւ անցկացվող նախնական ընտրություններում նախապես «գերերեքշաբթի» հայտարարված մարտի 6-ը թեեւ ավարտվեց Միթ Ռոմնիի առաջատար դիրքերի ամրապնդմամբ, բայց նրան չդարձրեց հանրապետականների միասնական թեկնածու: Փարիզյան «Ֆիգարո» թերթի հրապարակումներից մեկը, ի դեպ, կրում է «Ռոմնին հաղթեց, բայց չհամոզեց» խորհրդանշական վերնագիրը: Թեեւ Ռոմնին մարտի 6-ին հաջողության հասավ 10 նահանգից 6-ի նախնական ընտրություններում, ամբողջ երկրի մասշտաբով հանրապետականների համակիրների մեջ բավական բարձր է մնում նրա գլխավոր մրցակից Ռիկ Սանտորումի վարկանիշը: «Գելլափ» հաստատության անցկացրած հարցումները վկայում են, որ Ռոմնիին պաշտպանություն է հայտնում հանրապետականների ընտրազանգվածի 34 տոկոսը, Սանտորումին՝ 24 տոկոսը:**

**Ինչ վերաբերում է նահանգային ընտրությունների կոնկրետ արդյունքներին, Մասաչուսեթսի նախկին նահանգապետ Միթ Ռոմնին Ալյասկայում ստացել է քվեների 33,60 տոկոսը, Փենսիլվանիայի նախկին սենատոր Ռիկ Սանտորումը՝ 29,03 տոկոսը: Վիրջինիայում Ռոմնին ստացել է 60 տոկոս, կոնգրեսական Ռոն Պոլը՝ 40 տոկոս, Վերմոնտում՝ համապատասխանաբար 40 եւ 25 տոկոս (Սանտորումը՝ 23 տոկոս): Օհայոյում Ռոմնին ստացել է 38 տոկոս, Սանտորումը՝ 37: Այդահոյում Ռոմնիի ստացած քվեները կազմում են 64 տոկոս, Պոլինը՝ 18 տոկոս եւ այլն:**

**Սանտորումը հաղթել է 3 նահանգում՝ Թենեսիում, Հյուսիսային Դակոտայում եւ Օկլահոմայում: Այդ մասին հաղորդում է ABC News հեռուստաալիքը:**

**Ներկայացուցիչների պալատի նախկին նախագահ Նյուտ Գինգրիչը հաջողության է հասել 1 նահանգում՝ Ջորջիայում:**

**Հավանական է, որ Ռոմնին դառնա հանրապետականների միակ թեկնածու եւ աշնանը մրցի Բարաք Օբամայի հետ: Համենայն դեպս ինքը՝ Ռոմնին, նման հույսեր փայփայում է, քանզի «գերերեքշաբթի» օրվա արդյունքների հրապարակումից հետո նա արդեն խոսեց «սանձել» Մոսկվային, հակահրթիռային պաշտպանության համակարգ տեղաբաշխել եւ ֆինանսավորել Ռուսաստանի ընդդիմությանը:**

# «Չորքոտանի» ռոբոտը շարժվում է 28,9 կմ/ժամ արագությամբ



**Boston Dynamics ընկերության մշակած «չորքոտանի» ռոբոտ Cheetah-ը («Վագրակատու») քայլող ռոբոտների մեջ արագության ռեկորդ է սահմանել: Հեռանկարային հետազոտական նախագծերի վարչության՝ DARPA-ի կայքէջը հաղորդում է, որ լաբորատոր փորձարկումների ժամանակ ռոբոտը շարժվել է մինչեւ 28,9 կիլոմետր/ժամ արագությամբ: Քայլող ռոբոտների նախկին ռեկորդը սահմանվել էր 1989-ին (21 կմ/ժամ):**

**Cheetah-ի մեխանիկայի հիմքում առավել արագավազ կենդանիների շարժման սկզբունքն է: Ռոբոտը վագրակատվի նման վազում է «մեջքի» կորացման եւ ուղղման շնորհիվ: Ընկերությունը մտադիր է մեկ տարվա ընթացքում Cheetah-ը փորձարկել նաեւ բնության մեջ:**

**DARPA-ի պատվերով Cheetah-ը մշակվել է M3 ռոբոտաշինական ծրագրի շրջանակներում: Ծրագիրը չունի կոնկրետ ռազմական ուղղվածություն, բայց մշակումները հետագայում կարող են օգտագործվել նաեւ ռազմական նպատակներով:**

**Ներկայումս Boston Dynamics-ը DARPA-ի համար մշակում է LS3 լծկան ռոբոտ, որը կարող է օգտագործվել ամերիկացի զինծառայողների հանդերձանքի տեղափոխման նպատակով:**

ԾՆՆԴՅԱՆ 115-ԱՄՅԱԿ

# Տարին նվիրվում է Եղիշե Չարենցին



Մարտի 13-ին լրանում է հայ մեծանուն գրող Եղիշե Չարենցի ծննդյան 115-ամյակը, նոյեմբերի 27-ին՝ մահվան 75-րդ տարելիցը եւ գրական գործունեության 100-ամյակը: Տարին հայտարարվել է Չարենցյան:

«**Ազգը**» զրուցեց Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրենուհի Լիլիթ Հակոբյանի հետ եւ տեղեկացավ, որ ամբողջ տարվա ընթացքում հանրապետությունում եւ Արցախում անցկացվելու են բազմաթիվ ու բազմաբնույթ միջոցառումներ: Արդեն կազմվել է միջոցառումների մի մեծ փաթեթ, Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչության, ՀԳ միության, ՀՀ կրթության, գիտության նախարարության եւ Չարենցի տուն-թանգարանի համատեղ առաջարկներով: Միջոցառումների մեկնարկը կտրվի մարտի 13-ին՝ Չարենցի տուն-թանգարանից (ժամը՝ 11:00-ին): 115 գանգրահեր երիտասարդների, մտավորականների, Երեւանի դպրոցների սաների, բուհերի ուսանողների, գրողների, չարենցապաշտ-չարենցասերների շքերթը կանցնի Երեւանի փողոցներով եւ կանգ կառնի Չարենցի հուշարձանի մոտ: Հուշարձանի տարածքում կկայանա «Պոեզիայի տոն», որը մինչեւ ուշ երեկո կշարունակվի Չարենցի տուն-թանգարանում:

Միջոցառումների ցանկում ծրագրված է թանգարանում եւ դպրոցներում անցկացնել բաց դասեր, թեմատիկ դասեր, չարենցյան ընթերցումներ (ուսուցիչների եւ դպրոցականների մասնակցությամբ), լավագույն շարադրության, լավագույն նկարների մրցույթներ: Կլինեն նաեւ ցուցահանդեսներ, որոնց առանցքը կլինեն չարենցյան թեմաները:

Այս տարի, ավանդույթի համաձայն, կանցկացվի «Եղիշե Չարենցի անվան» հանրապետական ասմունքի փառատոնը: Ի դեպ, այդ փառատոնը նույնպես հոբելյանական է՝ լրանում է 10-րդ տարին եւ ամբողջովին նվիրվում է Չարենցի ստեղծագործություններին: Թանգարանը պատրաստվում է տպագրության հանձնել Եղիշե Չարենցին նվիրված երեք գիրք: Դրանք են՝ «Չարենց-115»՝ օժանդակ գրականության ձեռնարկ աշակերտների եւ ուսուցիչների համար, աշխարհի 26 լեզվով տպագրված Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության հավաքական գրքույկը, եւ երրորդը՝ անգլերեն լեզվով Չարենցի ստեղծագործությունների ընտրանին: Նախատեսվում են նաեւ գիտաժողովներ, դասախոսություններ, զեկուցումներ թանգարանում, ԳԱԱ գրականության ինստիտուտում եւ ԵՊՀ-ում, որոնց կմասնակցեն գրականագետներ, ասմունքողներ եւ այլն:

Չարենցյան միջոցառումները կեզրափակվեն նոյեմբերի 27-ին, գրողի մահվան տարելիցի օրը, «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայանալիք մեծ համերգով, որը նույնպես նվիրվում է Չարենցին:

Չարենցյան տարին սկսված է եւ գրողին նվիրված բոլոր ձեռնարկները կընթանան ողջ տարվա ընթացքում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ակցիա՝ նվիրված Անահիտ աստվածուհու արձանի մասունքները Հայաստան տեղափոխելուն

Ըստ Հայաստանի երիտասարդական հիմնադրամից ստացված տեղեկության, երեկ ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Միացյալ Թագավորության դեսպանատան մոտ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը կազմակերպել էր Անահիտ աստվածուհու արձանի մասունքները Բրիտանական թանգարանից Հայաստան տեղափոխելուն նվիրված ակցիա, որին մասնակցում էին հարյուրավոր երիտասարդներ: ՀԵՀ հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը եւ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Քեթրին Ջեյն Լիչին են փոխանցել Անահիտ աստվածուհու արձանի մասունքները հայրենիք վերադարձնելու ուղերձի տեքստը՝ հիմնադրամի նախաձեռնությանը միացած ավելի քան 20.000 երիտասարդների ստորագրությամբ:

Մայրության աստվածուհու արձանի մասունքները վերադարձնելուն նվիրված ստորագրությունները հանձնվեցին խորհրդանշական օր՝ մարտի 7-ին՝ կանանց մեկամսյակի մեկնարկի նախօրեին: Համահայկականի վերածված այս ակցիային միացել են նաեւ մի շարք սփյուռքահայ երիտասարդներ՝ լոսանջելեսաբնակ Գեւորգ Մարտիրոսյանի գլխավորությամբ: Նրանք ուղարկել են տարբեր երկրներից հավաքած 1063 ստորագրություն:

Ըստ Ա. Աշոտյանի, այս գործընթացը կարող է հաջողվել միայն հետեւողական լինելու պարագայում. «Ես անձամբ պատրաստվում եմ ե՛ւ որպես պաշտոնյա, ե՛ւ որպես քաղաքական գործիչ, ե՛ւ որպես քաղաքացի այս հարցը բոլոր պատեհ առիթներով բարձրացնել բրիտանական մեր գործընկերների առջեւ՝ հույս տածելով, որ մեր պատմության թանգարանում կունենանք ոչ թե արձանի պատճենը, այլ բնօրինակը»:

Ըստ դեսպան Քեթրին Ջեյն Լիչի տեղեկության, Բրիտանական թանգարանից արդեն կա դրական արձագանք՝ Անահիտ աստվածուհու արձանի մասունքները ժամանակավոր ցուցադրել Հայաստանում: Այն կդիտվի որպես հայ-բրիտանական հարաբերությունների խորացման եւ թանգարանների միջեւ համագործակցման քայլ:

Արմեն Աշոտյանը, շնորհակալությամբ նշել է, որ հայկական կողմը չի բավարարվելու ժամանակավոր ցուցադրությամբ. «Այս քայլը դիտարկվում է որպես Հայաստանի հասարակությանն ընձեռված հրաշալի առիթ՝ վերադարձնելու մեր հպարտությունը, մեր մշակութային արժեքները»:

Մ. Բ.

# Ռաֆայել Իշխանյանին

## Չուղարկված նամակներ շարքից

*Մարտի 9-ին լրանում է հայտնի լեզվաբան, մանկավարժ-դասախոս, հրապարակախոս, հայոց լեզվի մեծ պաշտպան, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Ռաֆայել Իշխանյանի ծննդյան 90-ամյակը: Մեր թերթի համար, որի էջերում հանգուցյալ լեզվաբանն ու լեզվաշինարարը տասնյակ հոդվածներ է ստորագրել, պարագայական առիթ չէ այս հոբելյանը, այլ՝ նման մտավորականի, մարտնչող հայագետի կարիքը մեր օրերում եւս շեշտադրելու պատեհություն: Ռաֆայել Իշխանյանի մեծագույն ստեղծագործությունը, մեր համոզմամբ, նրա մշակած եւ պայքարների գնով ընդունել տված ՀՀ լեզվի մասին օրենքն է: Օրենք՝ որ ամեն օր բռնաբարվում է մեր նորելուկ գործարարների, գավառամիտ չինովնիկների ու տգետ երիտասարդների կողմից: Ահա թե ինչու մենք այսօր էլ, ինչպես իր ժամանակին, փնտրում, կարիքն ենք զգում Ռ. Իշխանյանի նման մարտիկների:*

*Հոբելյանի առիթով առայժմ բավարարվում ենք մեր ժամանակների լավագույն հետաքննող լրագրողներից՝ գրող-էսսեիստ Մարգո Ղուկասյանի անտիպ այս նամակով, որի հասատումներն այնքան բնորոշ են:*



Սիրելի Ռաֆայել, թանկագին բարեկամս.

Այսօր ավարտեցի գրքիդ ընթերցումը: Ընդամենը 50-60 էջ էի կարդացել, որ քեզ նամակ գրելու միտք հղացա:

Տպավորությունն այնքան ուժեղ էր եւ ստացած բավականությունը մեծ, որ որոշեցի այս կերպ արտահայտել վերաբերմունքս:

Սկզբում այնքան էլ որոշակի չէի պատկերացնում, թե ինչն է հատկապես դրա պատճառը: Սակայն, աստիճանաբար, գրքի ընթերցանության ավարտին մոտ, հասկացա՝ մի քանի հանգամանք կա, որոնց մասին էլ ուզում եմ խոսել քեզ հետ:

Նախ. քո խոսքի՛ եւ քո գործի՛ ներդաշնակությունը: (Դա երեւում է առաջին իսկ էջերից): Այս տեսակետից քո գիրքը կարող է բացառիկ օրինակ ծառայել: Իմ կարծիքով, այսօր արմատացած բազմաթիվ թերությունները, գիտության ասպարեզում լինի, տնտեսության մեջ, թե իշխանության բարձր ոլորտներում, սկիզբ են առնում նրանից, որ ասվում է մի բան, արվում է մեկ այլ բան: Կամ՝ գրում են մի բան, իսկ կյանքում վարվում գրածին հակառակ: Էլ չեմ խոսում ընդունված օրենքների մասին՝ ճիշտ եւ օգտակար օրենքների, որոնք շատ անհրաժեշտ են, սակայն... չեն իրագործվում, չեն կիրառվում:

Երկրորդ. քո անաչառ եւ ազնիվ մոտեցումը քննարկվող հարցին:

Քո անհամաձայնությունը որոշ լեզվաբանների հետ չափազանց համոզիչ է եւ անշահախնդիր: Մնում ես ապշած, թե ոմանք ինչքան անհիմն մոտեցում կարող են ունենալ գիտության խնդիրներին, որքան կարող են հեռանալ փաստից, հետեւաբար եւ իրականությունից, որ, օրինակ, բազմաթիվ ուսանողներ, ու նաեւ այլք, Ջահուկյան հարգարժան ազգանունը կարող են բառացի հասկանալ: Եվ, ընդհանրապես այս կարգի որքան բան պարզվեց ինձ համար, որ երբեք էլ չէր իմացվի, եթե քո գիրքը չհրատարակվեր: Ուղղակի կարելի է ասել՝ գլխիվայր կանգնած ահագին բան շրջել ես եւ հիմնավոր դրել ոտքերի վրա:

Երրորդ. «Արեւելահայ բանաստեղծության լեզվի պատմություն». այս գիրքդ է, որ մղեց գրելու այս տողերը: Ըստ իս, վերնագիրը նեղ է գրքի համար, քանզի ընդգրկումը շատ ավելի մեծ է:

Սիրելիդ իմ Ռաֆայել, էջ առ էջ, գլուխ առ գլուխ իմ մեջ ամբողջանում էր մի գեղեցիկ պատկեր. հոսում է առուն եւ ճանապարհին իր մեջ է ներառում անթիվ առվակներ, դառնում է գետակ, եւ որքան առաջանում է, զուլալվում է, հոսքը սահուն ու ինքնավստահ է ընթանում, աստիճանաբար դառնում է գետ ի հաշիվ նույնիսկ լեռներից, ձորերից, քարակարկառներից, մինչեւ իսկ անձրեւի եւ ստորգետնյա ջրերից հարստանալով: Սա՛ է ազնվացած, սրբացած այդ ջուրը՝ Հայերենը, տերյանականությամբ հագեցված...

Չափազանց հպարտ եմ, որ ա՛յդ է իմ լեզուն:

Իմ կարծիքով, գրքի ամենամեծ արժանիքն այն է, որ սիրո եւ գնահատանքի նոր ալիք է բարձրանում ընթերցողի մեջ ի նպաստ մայրենի լեզվի: Հավանաբար, հոսող ջուրը եւ լեզուն մի շատ կարեւոր նույնություն ունեն՝ ինքնամաքրման եւ հարստացման հատկություն:

Գրքի մի քանի հատվածներ հատկապես գրավիչ էին: Օրինակ. արեւմտահայերենի քո արժեւորումը եւ համեմատումը արեւելահայերենի հետ: Նրբաբան էիր, երբ խոսքը վերաբերում էր հակառակ տրամադրություն արտահայտող բառերին:

«Տերյանի բանաստեղծական խառնվածքի որոշ գծեր». այս գլուխն ամբողջությամբ շատ մեծ նորություն էր պարունակում: Ինձ հատկապես հուզեց քո բացատրությունը Տերյանի տխրության եւ թախիծի վերաբերյալ՝ «Պարզ չէ՞, արդյոք, որ խոսքը բանաստեղծական ներշնչանքի մասին է»: Ընդհանրապես Տերյանի պոեզիայի վերլուծությունը սքանչելի էր սկզբից մինչեւ վերջ, եւ սիրով այդ գլուխը կարդացի երկրորդ անգամ:

Սիրելիդ իմ Ռաֆայել, թանկագին բարեկամս, մշտապես հիացել եմ քեզնով, քո ազնվականությամբ եւ անկաշառությամբ, քո տարողունակությամբ, գիտելիքների պաշարով, մայրենի լեզվի հանդեպ քո խանդոտ սիրով: Վաղուց ի վեր այս է իմ համոզմունքը, որ եւ վերջապես հանձնեցի թղթին:

Բարեկամուհիդ՝
ՄԱՐԳՈ ՂՈՒԿԱՍՅԱՆ
14 հունիսի, 1978 թ.

# «Ապրելու իրավունքը»՝ Գարեգին Գեւորգյանի վաստակը

Երեւանի պետական մանկավարժական համալսարանի հումանիտար գրականության ընթերցասրահում նախորդ օրը տեղի ունեցավ Գարեգին Գեւորգյանի «Ապրելու իրավունք» գրքի շնորհանդեսը:

Այն 77 էջից բաղկացած բանաստեղծությունների ժողովածու է:

«Ժամանակակից հայ գրականությունը ողողված է ոչինչ չասող, մեծածավալ պոետական ժողովածուներով: Ներկայիս պոեզիայի բազմազանության մեջ «Ապրելու իրավունքը» առանձնահատուկ երեւույթ է: Հետեւելով Գարեգինի ստեղծագործական ուղուն՝ կարող ենք ասել, որ այս գիրքը բացառիկ երեւույթ է ոչ միայն նրա ստեղծագործություններում, այլեւ արդի քնարերգության դաշտում»,- բացման խոսքում ասաց Գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը**:

Գրքի յուրաքանչյուր տպագիր տողի հանդեպ հեղինակը վերաբերվել է մեծ պատասխանատվությամբ եւ բծախնդրությամբ: Երեք բաժիններն էլ մի հետաքրքրական ամբողջություն են, որում ներկայացված են ժամանակի ամբողջ խռովքը, ներկայիս հակասությունները: Բանաստեղծություններում նաեւ սասունցու ապաստարանն է, տունը, մանկությունը, որոնց մասին հիշողությունները օգնում են այլ կերպ վերապրել ոչ հաճելի հուշերը:

Շատ գրքերում բացակայում է այսօրվա ռիթմը, շունչը, իսկ «Ապրելու իրավունք»-ում առկա է այն տագնապը, որը բնորոշ է հայրենիքի ճակատագրով մտահոգ գրողին:

Գրքի խմբագիր Թադեւոս Տոնոյանը գիրքը խմբագրելիս կարեւորել է բանաստեղծի մտածողության եւ հոգեկան ապրումների փոխանցումը ընթերցողին:

«Պետք է խրախուսել այսպիսի բանաստեղծներին, ովքեր չեն ուզում, որ հայն իր երկրում գաղթականի կարգավիճակ ունենա, որ ստրուկները հաղթեն արքաներին: Դժվար երկունքով այս հրաշալի ծնունդը պիտի գնահատվի, այսօրվա շնորհանդեսը պիտի խթանի այլ գրքերի ծնունդին: Այս ժողովածուն հավաստեց գրքի ապրելու իրավունքը»,- հավելեց Լեւոն Անանյանը:

Խեղված արժեհամակարգի ու բարքերի դեմ Գարեգին Գեւորգյանը պայքարում է իր վճիռ պոեզիայով:

Արվեստագիտության դոկտոր, պետական մրցանակի դափնեկիր **Հրավարդ Հակոբյանը** շնորհավորեց գործընկերոջն ու հավաստեց. «Ընթերցողները սիրում են պոեզիան, երբ հասկանում են ամեն ինչ: Խոսքը պետք է լինի պարզ ու պատկերավոր: Գարեգինի ստեղծագործություններից ընթերցողներիս է հասնում այն միտքը, որով նա ապրում է, հուզվում»:

Մանկագիր **Սուրեն Մուրադյանը** նույնպես կարեւորում է գրքի լույս ընծայումը. «Պոեզիայի հեղեղի մեջ այս գիրքը կարծես մարգարիտ լինի: Գրքում հրաշալի են ներկայացված հատկապես գյուղական պատկերներն ու մանկության օրերի կարոտը»:

**Գարեգին Գեւորգյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ ընդգծելով. «Եթե ծնվելու իրավունքը ստանում ենք ի վերուստ, ապա ապրելու իրավունքը վաստակում ենք ժամանակի ընթացքում: Ես սիրում եմ իմ երկիրը, քան այլ երկրի պտղունց քարերը: Ես իմ ազգի զավակներից եմ եւ ապրում ու ստեղծագործում եմ իմ երկրում իմ ժամանակին համընթաց»:

Շնորհանդեսին ներկա էին համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը**, պրոֆեսորադասախոսական կազմը, Գարեգին Գեւորգյանի գրական ընկերները:

# Դավիթ Սաֆարյանը Եվրոպայի բրոնզե մրցանակակիր

Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում մեկնարկել է ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը: Թեեւ մրցաշարը վարկանիշային չէ, սակայն հավաքականները մրցաշարին ներկայացել են իրենց ուժեղագույն կազմերով: Այնպես որ մեդալների համար բավականին լուրջ մրցակցություն է ծավալվել:




Առաջինը մրցապարտեզը տրամադրվել է ազատոճային ըմբիշներին: Մրցումների առաջին օրը մրցագորգ դուրս եկան մինչեւ 66 եւ մինչեւ 96 կգ քաշային ըմբիշները: Մեկնարկը հաջող էր հայ ըմբիշների համար, որոնք առաջին մեդալը նվաճեցին: Եվրոպայի առաջնության բրոնզե մրցանակակիր դարձավ մինչեւ 66 կգ քաշային Դավիթ Սաֆարյանը:

Առաջին գոտեմարտում Դավիթը մրցեց ավստրիացի Գեորգ Մարչլի հետ: Հայ ըմբիշի առավելությունը նկատելի էր: Առաջին մրցափուլը նա շահեց 3-0 հաշվով, 2-րդում եւս 4 միավոր վաստակեց: 3-րդ մրցափուլում մրցակիցներին չհաջողվեց միավոր վաստակել: Այսպիսով, հաղթելով 3-0 հաշվով, Դավիթ Սաֆարյանը մտավ քառորդ եզրափակիչ: Այդ փուլում նրա մրցակիցն ադրբեջանցի Էմին Ազիզովն էր: Առաջին մրցափուլում Ազիզովը հաղթեց 2-0 հաշվով, մյուս երկուսում մրցակիցները մեկական միավոր վաստակեցին: Սակայն քանի որ այդ մրցափուլերում վերջինը միավոր էր վաստակել Դավիթը, ուստի նրա օգտին գրանցվեց գոտեմարտը:

Կիսաեզրափակիչում Սաֆարյանը գոտեմարտեց ռուսաստանցի Ալան Գոգաեւի հետ: Առաջին երկու մրցափուլերը միեւնույն 2-0 հաշվով շահեց Գոգաեւը, 3-րդն ավարտվեց 0-0 հաշվով: Եզրափակիչի ուղեգիրը նվաճեց Գոգաեւը, որը հաղթելով բուլղարացի Լեոնիդ Բազանին, հռչակվեց Եվրոպայի չեմպիոն: Իսկ Սաֆարյանն իրավունք ստացավ վիճարկելու բրոնզե մեդալը թուրք Յակուպ Գոռի հետ գոտեմարտում: Հաջողությունն ուղեկցեց հայ ըմբիշին:

Մինչեւ 96 կգ քաշային կարգում Անդրանիկ Գալստյանն առաջին գոտեմարտում պարտվեց հունգարացի Թամաշ Ֆոդորին ու դուրս մնաց հետագա պայքարից: Չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Աբդուսալամ Գադիսովը, որը եզրափակիչում պարտության մատնեց ուկրաինացի Վալերի Անդրիցեւին:

## ՀՀ հավաքականը նահանջել է 3 հորիզոնականով

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման նոր ցուցակում 44-րդ տեղում է: Մեր ընտրանին նախորդ ամսվա համեմատ 3 հորիզոնականով նահանջել է: Սերբերը, որոնք հաղթեցին մեր հավաքականի երիտասարդական կազմին, նահանջել են 1 հորիզոնականով՝ զբաղեցնելով 26-րդ տեղը: Իսկ հայերին պարտված կանադացիները միանգամից 8 հորիզոնականով նահանջել են՝ զբաղեցնելով 79-րդ տեղը:



Առաջատարի դիրքը պահպանել է Իսպանիայի հավաքականը: 2-րդ եւ 3-րդ տեղերում Հոլանդիայի ու Գերմանիայի հավաքականներն են, որոնք տեղերով փոխատեղվել են: Ուրուգվայը պահպանել է 4-րդ տեղը, իսկ ահա բրազիլացիները 2 տեղով առաջադիմել են ու եզրափակում են լավագույն հնգյակը: Հաջորդ տեղերում են Անգլիայի, Պորտուգալիայի, Արգենտինայի, Իտալիայի եւ Խորվաթիայի հավաքականները: Ընդ որում արգենտինացիները տասնյակ են մտել դանիացիների փոխարեն, որոնք 11-րդ տեղում են: ՀՀ հավաքականի մյուս մրցակիցները 3 հորիզոնականով առաջադիմել են՝ զբաղեցնելով 85-րդ տեղը: Զգալի առաջընթաց է ունեցել Մալթայի հավաքականը, որը 11 տեղով բարձրացել ու հանգրվանել է 148-րդ հորիզոնականում:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից ամենաբարձր վարկանիշն ունի Ռուսաստանը՝ մեկ հորիզոնականով բարձրանալով, զբաղեցնում է 12-րդ տեղը: Հայաստանը 2-րդն է ԱՊՀ երկրների մեջ իր վարկանիշով: ՀՀ հավաքականից հետո վարկանիշային աղյուսակում տեղ են զբաղեցրել Էստոնիայի (47-րդ), Ուկրաինայի (49-րդ), Ուզբեկստանի (67-րդ), Բելառուսի (69-րդ), Վրաստանի (74-րդ), Լատվիայի (78-րդ), Լիտվայի (91-րդ), Ադրբեջանի (116-րդ), Ղազախստանի (142-րդ), Մոլդովայի (143-րդ), Տաջիկստանի (145-րդ), Թուրքմենստանի (166-րդ) եւ Ղրղզստանի (192-րդ) ընտրանիները:

## Հրաշք տեղի չունեցավ

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի մրցաշարում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի առաջին 2 մասնակիցները: Պայքարը կշարունակեն իտալական «Միլանն» ու պորտուգալական «Բենֆիկան»: «Միլանը» դեռեւս առաջին խաղում էր գործնականում ապահովել հաջորդ փուլի ուղեգիրը՝ սեփական հարկի տակ 4-0 հաշվով հաղթելով Լոնդոնի «Արսենալին»: Ճիշտ է, պատասխան խաղում անգլիական ակումբը քիչ էր մնացել հրաշք գործեր: Լոնդոնում առաջին խաղակեսից հետո «Արսենալը» հաղթում էր 3-0 հաշվով: Սակայն ընդմիջումից հետո դաշտի տերերն այդպես էլ չկարողացան խփել 4-րդ գնդակը: Չնայած խոշոր հաշվով հաղթանակին, «Արսենալը» դուրս մնաց հետագա պայքարից:

Լիսաբոնում «Բենֆիկան» հաջողությամբ լուծեց իր առջեւ դրված խնդիրը՝ 2 անպատասխան գնդակ ուղարկելով «Զենիթի» դարպասը, որին առաջին խաղում պարտվել էր 2-3 հաշվով:

## Գոլազուրկ ոչ-ոքի

Անթալիայում ուսումնամարզական հավաքի մեջ գտնվող «Ուլիսը» ստուգողական 4-րդ հանդիպումն անցկացրեց: Մրցակիցը ռուսական «Սլավյանսկն» էր: Դարպասները մնացին անառիկ: Հիշեցնենք, որ նախորդ 3 խաղերում «Ուլիսը» պարտվել էր միեւնույն 1-3 հաշվով:

## Մոուրինյուն «Չելսին» գլխավորելու իր պահանջներն ունի

Daily Express-ի տեղեկացմամբ, Մադրիդի «Ռեալի» ներկայիս գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն պատրաստ է ամռանը գլխավորել Լոնդոնի «Չելսին», եթե ակումբի ղեկավարությունը բավարարի նրա պահանջները: Պորտուգալացի մասնագետը տարեկան 12 մլն ֆունտ ստեռլինգ աշխատավարձ է պահանջել: Բացի այդ նա ցանկանում է, որպեսզի իր հետ «Չելսի» տեղափոխվի Քրիշտիանու Ռոնալդուն:

## «Բանանցը» կրկին մեկնեց Կիպրոս

Երեւանի «Բանանցը» Կիպրոսից կարճ ժամանակով Հայաստան վերադառնալով, կրկին մեկնել է այդ երկրի Այանապա քաղաք՝ անցկացնելու ուսումնամարզական վերջին հավաքը: Թիմի կազմում մարզումներին կմասնակցեն 24 ֆուտբոլիստներ: Կիպրոսում թիմը ստուգողական մի քանի հանդիպումներ կանցկացնի:



## Առաջատարները հաշտություն կնքեցին

Ֆրանսիայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր երկու առաջատարների՝ Բասեմ Ամինի եւ Տիգրան Պետրոսյանի մրցավեճը, որոնք մեկնարկում 4 անընդմեջ հաղթանակներ էին տոնել: Առաջատարների մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Այսպիսով, Հայաստանի այս տարվա չեմպիոնն առաջին կես միավորը կորցրեց: 2 շախմատիստ՝ Պենտալա Հարիկրիշնային եւ Զանդա Սանդիպանին հաջողվեց տոնած հաղթանակների շնորհիվ եւս վաստակել 4,5 միավոր ու Տիգրան Պետրոսյանի եւ Բասեմ Ամինի հետ գլխավորել աղյուսակը:

Առաջատար քառյակից կես միավորով հետ են մնում Դավիթ Հարությունյանն ու Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը: Դավիթը հաղթեց Էմանուել Պրեվոտին, Մխիթարյանը պարտության մատնեց Ալեքսանդր Կովչանին:

Զավեն Անդրեասյանը, Տիգրան Ղարամյանն ու Գեւորգ Հարությունյանը վաստակել են 3,5-ական միավոր: Անդրեասյանն ու Ղարամյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Մարչին Թազբիրի եւ Մանուել Ապիկելայի հետ, իսկ Հարությունյանը հաղթեց Լյուբով Կոստյուկովային:

3-ական միավոր ունեն ԱՄՆ-ում բնակվող Տաթեւ Աբրահամյանը եւ ռուսաստանցի Կարինա Համբարձումովան:

## Հաջող տուր հայ շախմատիստուհիների համար



Շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնության 5-րդ տուրը հաջող էր հայ շախմատիստուհիների համար, որոնցից 4-ը հաղթանակներ տոնեցին: Էլինա Դանիելյանը հաղթեց Մոնիկա Սեղային, Լիլիթ Մկրտչյանը պարտության մատնեց Ջոաննա Դվորակովսկայային, Մարիա Կուրսովան առավելության հասավ ռուսաստանցի Նելլի Ստեփանյանի նկատմամբ, իսկ Լիլիթ Գալոյանը շահեց պարտիան Մարգարիտա Կոիմբրայի հետ մրցավեճում: Միայն Աննա Հայրապետյանն անհաջող խաղաց՝ զիջելով Ջովաննա Վոյինովիչին: Ֆրանսիան ներկայացնող Էլմիրա Սկրիպչենկոն հաշտություն կնքեց Ելենա Սեդինայի հետ:

5 տուրից հետո Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Էլմիրա Սկրիպչենկոն եւ Մարիա Կուրսովան վաստակել են 3-ական միավոր: Լիլիթ Գալոյանն ունի 2,5, Աննա Հայրապետյանը ու Նելլի Ալեքսանյանը՝ 2-ական միավոր:

Մրցաշարում եռիշխանություն է: 4,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են ֆրանսիացի Մարիա Սեբագը, ռումինացի Քրիստինա Ֆոյսորն ու Հունգարիան ներկայացնող Տրանգ Հոանգը: Սեբագը ոչ-ոքի խաղաց Վալենտինա Գունինայի հետ, իսկ ահա Ֆոյսորն ու Հոանգը հաղթելով համապատասխանաբար Նինո Խուրցիձեին եւ Նաստասիա Զիազուլկինային, միավորներով հավասարվեցին առաջատարին:

## Մնաց մեկ տուր

Իրանի Ռաշտ քաղաքում շարունակվող շախմատի մրցաշարի հերթական 2 տուրերում Լեւոն Բաբուջյանն ընդամենը կես միավոր վաստակեց: 9-րդ տուրում նա հաշտություն կնքեց Համեդ Մոսավիանիի հետ, իսկ հաջորդ մրցախաղում պարտվեց Պոռւա Իդանիին: 10 տուրից հետո Բաբուջյանը 6,5 միավորով նահանջեց 8-րդ հորիզոնական ու զրկվեց գլխավոր մրցանակը շահելու հնարավորությունից:

6,5 միավոր է վաստակել նաեւ Արսեն Եղիազարյանը: Նա նախ հաղթեց Մահմուդ Լոդիիին, ապա պարտվեց Շոթա Ազալաձեին: Վլադիմիր Կանջարյանը 4 միավորով 84-րդ տեղում է:

Մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ ուժեղագույնների խմբի աղյուսակը 8 միավորով գլխավորում է Պոռւա Իդանին: B խմբի մրցաշարում Մարիա Գեւորգյանը 10 տուրից հետո 7 միավորով 15-րդ տեղում է, իսկ Հայկ Մարտիրոսյանը 6,5 միավորով 32-րդն է:

## Երջանիկ Ավետիսյանը եզրափակիչ չմտավ

Կիպրոսի Նիկոսիա քաղաքում անցկացված ստենդային հրաձգության Գրան պրիի խաղարկության հերթական փուլում անհաջող հանդես եկավ Երջանիկ Ավետիսյանը: Նա նախնական փուլում վաստակեց 72 միավոր, ինչը բավարար չէր եզրափակիչ փուլ մտնելու համար: Հաղթող ճանաչվեց լեհ հրաձգուհի Ալեքսանդրա Յարմոլենսկայան:

Հայ փորձառու հրաձգուհին պատրաստվում է մայիսի 17-26-ը Լառնակայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:

## «Ինտերը» բանակցում է պորտուգալացու հետ

Միլանի «Ինտերը» սկսել է բանակցել Լոնդոնի «Չելսիից» հեռացված Անդրե Վիլաշ-Բոաշի հետ: Իտալական ակումբը պորտուգալացի մասնագետին առաջարկում է նոր մրցաշրջանից գլխավորել «Ինտերն» ու 2 տարվա պայմանագիր կնքել: Նոր գլխավոր մարզչի տարեկան աշխատավարձը 2,5 մլն ֆունտ ստեռլինգ կլինի:

## Խաղացանկը հայտնի է

Հայտնի է դարձել ֆուտբոլի Եվրոպայի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականների 2-րդ փուլի խաղացանկը: Ինչպես հայտնի է, Հայաստանի հավաքականը հանդես է գալու Իտալիայում կայանալիք ընտրական մրցաշարում:

Վարազդատ Ավետիսյանի սաներն առաջին խաղում՝ մայիսի 23-ին ուժերը կչափեն իսպանացիների հետ: 2 օր անց հայ ֆուտբոլիստները կմրցեն բելգիացիների հետ, իսկ մայիսի 28-ին մրցակիցը կլինի Իտալիայի պատանեկան հավաքականը: Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր կնվաճեն միայն ընտրական խմբերի հաղթողները:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Տոնական անակնկալ «ՎիվաՍել-ՄՏՍ բոնուսի» մասնակիցների համար

ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ձեռնարկությունը, ուրախ է տեղեկացնել, որ կանանց միջազգային օրվա կապակցությամբ մարտի 8-ից 9-ը «ՎիվաՍել-ՄՏՍ բոնուսի» մասնակիցները հետեւյալ նվերները կարող են ստանալ 50% զեղչով, այսինքն՝ օգտագործելով պահանջվող միավորների կեսը:

Ի դեպ բաժանորդները, ովքեր դեռ չեն հասցրել գրանցվել «ՎիվաՍել-ՄՏՍ բոնուս» ծրագրին, կարող են գրանցվել ուղարկելով *505# հրահանգը, կամ պարզապես ուղարկել BONUS բառը 5050 կարճ համարին, կամ էլ գրանցվել «Ինտերնետ օգնական» պորտալից: Գրանցումն արժե 10 դրամ (ներառյալ ԱԱՀ):

| Նվեր | Անհրաժեշտ միավորներ | Մարտի 8-9 փոխանակելու դեպքում անհրաժեշտ միավորներ | Նվերներ ձեռք բերելու համար անհրաժեշտ է հավաքել ստորեւ նշված հրահանգները |
|---|---|---|---|
| 30 րոպե ներցանցային խոսելաժամանակ | 80 | 40 | *505*3# |
| 60 րոպե ներցանցային խոսելաժամանակ | 150 | 75 | *505*4# |
| 1 օր անսահմանափակ թվով ներցանցային զանգեր կատարելու հնարավորություն | 100 | 50 | *505*5# |

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից կամ bonus.mts.am, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:



# Կանանց տոների կապակցությամբ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ն նոր անակնկալ է մատուցում իր բաժանորդներին

**«ՎիվաՍել-ՄՏՍ»-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ձեռնարկությունը տեղեկացնում է, որ ս.թ. մարտի 8-ից ապրիլի 7-ը, առնվազն 1 ամսով բաժանորդագրվելով «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ» կամ «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ+» սակագնային պլանին, բաժանորդները կարող են մարտ եւ ապրիլ ամիսներին անվճար օգտվել անսահմանափակ ինտերնետից:**

**Ակցիայի շրջանակներում մինչեւ 21.6 Մբիթ/վրկ ներբեռնման եւ մինչեւ 5.76 Մբիթ/վրկ վերբեռնման արագություն ապահովող «ՄՏՍ կոնեկտ E353» USB մոդեմը նույնպես տրամադրվում է բոլորովին անվճար:**

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:**

## ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության «Զաբել Եսայան» կանանց ակումբի նախաձեռնությամբ մարտի 9-ին ժամը 15:00-ին Թեքեյան կենտրոնի ցուցասրահում տեղի կունենա «Կուսակցական ստեղծագործողներին աստղեզ» խորագիրը կրող ցուցահանդեսի բացման արարողությունը: Ցուցահանդեսին մասնակցում են ինչպես կուսակցական, այնպես էլ համակիր ստեղծագործողներ:

Ցուցահանդեսը նվիրվում է կանանց միջազգային օրվան:

**Արմենական-ՌԱԿ կենտրոնական վարչություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է ՀՀՄՆՄԾԻԳԾՁԲ-67 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2012 թ-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀՄՆՄԾԻԳԾՁԲ-67**

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն, որը գտնվում է ք. Երեւան, Կառավարական 3 շենք հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել **կահույքի հիմնանորոգման** ծառայությունների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության **«Ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար կահույքի հիմնանորոգման ծառայությունների** ձեռքբերումը:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ **2012 թ. պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին** եւ գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետն է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հրավերը թղթային ձեւով տրամադրվելու է անվճար: Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երեւան, Կառավարական 3 շենք հասցեով, 7-րդ հարկ, ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ն, եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, Հեռ. 58 51 67***

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Տպագրական նյութերի պատրաստման կազմակերպության ընտրման համար բաց մրցույթ հայտարարելու մասին**

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ հայտարարում է բաց մրցույթ տպագրական նյութերի պատրաստման նպատակով՝ համապատասխան կազմակերպության ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք ունեն անհրաժեշտ տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փող., շ. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2012թ. ապրիլի 6-ը ներառյալ, ժամը 17:00:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2012 թ. ապրիլի 13-ին, ժամը 16:00-ին:

Մրցույթին մասնակցելու պայմանները տեղադրված են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Գովազդի եւ հասարակայնության հետ կապերի բաժին:

Հասցեն՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փող., շ. 46,

**Գովազդի եւ հասարակայնության հետ կապերի բաժին**

**Կոնտակտային անձ՝ Արմինե Մնացականյան, Մարինա Սաժումյան**

**Հեռ. +(37410) 58-28-60, ներքին՝ 3412**

**Էլ. փոստ՝ pr@vtb.am**

**Օքրո Օքրոյանի անվ.«Աստված Սեր է» գրական հիմնադրամ**

գրանցված 09.09.2003թ. գր. համար 22216000158; 03Ա061097; ՀՎՀՀ 01834554

հասցե՝ ք. Երևան,Իսահակյան 28, հեռ.,ֆաքս 37410527416, Oqroyan.found@mail.ru

**Հիմնադրամի 2011թ-ի տարեկան հաշվետվությունների հրապարակում /հազ. դրամ/**

Հիմնադրամը իրականացնում է գրական-բարեգործական գործունեություն

**Մուտքեր - 1.Հիմնադիրներից ներդրում-1667**

**Ելքեր -1533 այդ թվում; 1.Անհատույց գրքերի տրամադրում և օգնություն -839;**

2.Վարչական ծախսեր- աշխատավարձ-403; սոց հիմնադրամին-121; բանկային, գրասենյակային-17; բյուջե-07; գրասենյակային սարքերի օտարում-152;

Հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի անդամները, Կառավարիչը և հիմնադրամի անձնակազմում ընդգրկված մնացած անձինք հիմնադրամի միջոցներից չեն օգտվել:

**ՀԱՇՎԵԿՇԻՌ**

| **Ակտիվ** | **Պասիվ** |
|---|---|
| Հիմնական միջոցներ-677 | Կանոնադրական կապիտալ-2958 |
| Անավարտ արտադրություն-2926 | Կրեդիտորական պարտք հիմնադիրներին-958 |
| Դրամական միջոցներ և համարժեքներ -206 | |
| Դեբիտ. պարտք սոց. հիմնադր. և բյուջեին -8 | |
| Տրված ընթ. կանխավճար-100 | |
| **ՀԱՇՎԵԿՇԻՌ-3917** | **ՀԱՇՎԵԿՇԻՌ-3917** |

*Հիմնադրամի նախագահ* *Ա. Ոսկանյան*

*գլխ. հաշվապահ* *Ա. Թոփալյան*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Զարենց 4 թիվ 133 շինություն | ոչ բնակելի տարածք | | 9.42 | 1,800,000 |
| 2 | Տիգրան Մեծի 32 շենք թիվ 19 շինություն | ոչ բնակելի տարածք | | 56.5 | 5,500,000 |
| 3 | Արամ Խաչատրյան 8 շենք 44 տարածք | ոչ բնակելի տարածք | | 17.5 | 1,990,000 |
| 4 | Բաղրամյան 21 շենք թիվ 84 շինություն | ոչ բնակելի տարածք | | 43 | 3,380,000 |
| 5 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288 | 15,260,000 |
| 6 | Մոլդովական 25/7 կաթսայատուն | կաթսայատուն | 310.5 | 276.8 | 6,751,000 |
| 7 | Գ. Չաուշի փողոց 14/6 ԿՋՀ 3 | կաթսայատուն | 542.63 | 542.63 | 7,300,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ մարտի 22-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ մարտի 22-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Գիտանք Ա» գիտակրթական եւ մշակութային հիմնադրամի 2011 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Գիտանք Ա» գիտակրթական եւ մշակութային հիմնադրամ:
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «21» հուլիսի 1998 թ., պետական գրանցման վկայական՝ 03 Ա 073206:
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ Երևան, Մ. Մաշտոցի 36, բն. 14, հեռ. 53 06 29:
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝
Ալեքսանդր Աղաբեկյան, հիմնադրամի միջոցներից չի օգտվել:
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝
Կարինե Աղաբեկյան, նախագահ, հիմնադրամի միջոցներից չի օգտվել :
Տիգրան Աղաբեկյան, հիմնադրամի միջոցներից չի օգտվել:
Աննա Պետրոսյան, հիմնադրամի միջոցներից չի օգտվել:
6. Աշխատակազմ չկա:
7. Իրականացված ծրագրերը՝ Հրատարակվել է չորս անուն գիրք:
8. Ֆինանսավորման աղբյուրները՝ նախկինում հրատարակված գրքերի վաճառքից ստացված հասույթը եւ մեկ դրամաշնորհ, ընդամենը՝ 2981 հազար դրամ:
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝
2981 հազար դրամ:
10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝
2981 հազար դրամ:
11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ աուդիտ չի իրականացվել, քանի որ հիմնադրամի ակտիվների արժեքը չի գերազանցում 10 միլիոն դրամը:

Հաշվետվությունը հաստատվել է հոգաբարձուների խորհրդի որոշմամբ 02.03.2012թ.

***Հիմնադրամի տնօրեն Ալեքսանդր Աղաբեկյան***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 7.3.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: